



9 (41.926)

Հ-28

# ՀԱՅՈՑ

ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԸՆՏ ՄՈՄԶԵՆԻ



կազմեց

Դ. ՌԵԹՈՒՆԵԱՆ

1164


~~663~~



Վ. Ա. Դ. Ա. Ր. Հ. Ա. Պ. Ա. Տ. Ա. Տ.

Տպարան Մայր Արքունի Ս. Էջմիածնի

1904



ՀԱՅՈՑ ՆԵԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ք Ս Տ Ա Մ Զ Է Ւ Թ

ԵՐԿՐԻ Խ 0 0 Բ

Գերմանացի նշանաւոր պատմաբան Մուզենի հոչակն  
ու պատմաբանական տաղանդն արդէն յայտնի է: Նրա  
«Հռոմէական Պատմութիւն» վերնագիրը կրող քառահատոր  
գրքից Հայոց պատմութեան վերաբերեալ մասերը թարգ-  
մանօրէն քաղուածաբար հանելուա նպատակն է եղել դի-  
րութիւն եւ յարմարութիւն տալ մեր նախնական պատ-  
մութեամբ հետաքրքրուողներին ուսումնասիրել այդ մովֆ  
շրջանը, տալով նոցա ընդ սմբն մի աշքի ընկնող աղբիւր-  
մանաւանդ ոք շատերին ուղղակի անմատենլի է այս մեծա-  
ծաւալ զիրքը: Մեր պատմութեան վերաբերեալ կտրները  
թարգմանել եմ բառացի: Չեռքիս տակ եղած զիրքը զեր-  
մաներէն ընազրի 7-րդ հրատարակութիւնն էր 1881 թուի:

3291

Дозволено цензурою 5 Февраля 1904 г. Г. Тифлісъ

17332

Ա. Դ. Ք Ս Ս Ն Դ Ի Մ Մ ա կ ե դ ո ն ա ց ու ա ր շ ա ւ ա ն ք ն ե ր ի պ տ ու զ ը  
նրա նման վաղանցուկ չեղաւ, հետևանքների կողմից այս  
մեծ աշխարհակալի թողած հետքը, նրա արշաւանքների  
արդիւնքը խիստ բաղմազան և ընդարձակ է: Այս օրից,  
երբ նա իւր միտքն ու սուրն ուղղեց գէպի ծայրագոյն  
արևելք, արևելքի համար մի ընդարձակ, միևնոյն ժա-  
մանակ բոլորովին անծանօթ ու կենսաբեր հոսանք ըս-  
կսուեցաւ մաքի, բանականութեան հայրենիքից գէպի  
մարդկութեան վաղեմի, ընական որբանը՝ Ասիան: Այդ-  
հոսանքը գնալով ուռնացաւ և ծաւալեցաւ նուաճելով

հետզետէ անծանօթ ու նոր շրջաններ։ Այդ հոսանքն է ելենիզմն էր, որ ուր ոսք էր դնում, ամեն բան յեղաւ շրջում էր ու կերպարանափոխում՝ սկզբում արտաքուստ և առաջ հետզետէ նաև ներքուստ։ Մի անդամ իւրացնելուց յետոյ ամեն ազգ այնուհետև իւր պարտքն էր համարում արևմտաքից եկած այդ կենսատու կեանքը պահել ու մնունդ տալ նրան իւր մէջ։

Քաղաքական տեսակէտից ևս արշաւանքների հետեւանքը մեծ է լինում։ Ասպարէզ են գալիս պետական միքանի նոր կազմակերպութիւններ։ Միաժամանակ յառաջնում են բուն Մակերուսական, Սելևկեան (Ասիա) և Պտղոմէական հզօր պետութիւնները, որոնք որոշ ժամանակից յետոյ թուլանում, անդօրանում են կառավարիչների սենյարհներութեան և գահակալութեան համար վարած քաղաքաթիւ կունեների պատճառով։ Այնոք որ Քըրիստոսից առաջ Բ. դարում մենք ականատես ենք պատամական մի խոշոր գործողութեան, մի կողմից մեծ պետութիւնները հետզետէ ընկնում, կորցնում են իրանց փայլը, միւս կողմից փոքր ու շատ անդամ՝ վասալ իշխանութիւնները կամաց կամաց զօրանալով նշանաւոր տեղ են գրաւում ասիական պատմութեան մէջ։

Քաջի վերայիշեալ Յ պետութիւններից նուազել և թուլացել էր նաև Պարսից արքաների լայնածաւալ պետութիւնը և թէպէտ Գ. դարու կիսում Պարսկաստանը պարթեների միջոցով դարձեալ ծառայական գրութիւնից եղաւ պարթեն Արշակունի պետութեան հիմնադրութեամբ, սակայն դեռ երկար դգալի էր նորա վրայ թողած աշխարհականի հետքերը։

Փոքր ասիական պետութիւններից պատմութեան բեմ են դուրս գալիս և ահագին դեր խաղում Պոնտական և Պերգամոնի փոքրիկ թագավորութիւնները։

Փոքր պետութիւնների կարգին պատկանում է նաև Հայաստանը, որ այս շրջանում դօւրս է գալիս իւր վասալական կէս-հարատակ գրութիւնից և անկան տէրութիւն է կազմում Արտաշիսեան հարստութեան օրով։ Հա-

յաստանն սկզբնապէս արքայից արքաների ընդարձակածաւալ պետութեան մի սատրապութիւնն էր կաղմում, որ շատ անգամ անկախ և համարեան ինքնազլուխ սատրապներով էր կառավարում, և պարսից միապետների գերիշխանութիւնը լոկ անուանական էր։ Հայաստանն այդ գրութեան մէջ փոփոխակի բախտով մնում է, մինչեւ որ Հռոմէացիք վերջնականապէս յաղթում ու ջախջախում են Սելևկեանց զօրութիւնը Անտիոքոս Գ. Մեծի օրով (224—187) և ստիպում են բոլորովին ձեռք քաշել արեւմտեան Ասիայից։ Ահա այդ ժամանակ և մասամբ գրապարականապէս ինքնուրոյն պետութեան Աստարքիան և Զարիադրիս (Զարեհ) գառնում են առաջինը Մեծ Հայաստանում, երկրորդը Փոքր Հայքում— Սոֆինում նոր բնիկ հարստութեանց հիմնադրիներ 189 թ. Ք. ա. <sup>(1)</sup>)։

Թէ ինչպէս կառավարեցին այս ժագաւորները իրանց նորահաստատ պետութեան մէջ և ինչ դեր խաղացին, Մոմքէն չի խօսում ամենին, մանաւանդ որ Հայաստանն այդ ժամանակ կարեոր տեղ և հետաքրքրութիւն չուներ շրջակայ աշխարհի, մասնաւորապէս Հռոմի շահերի համար։ Աննիբալի մահը պատմելիս Մոմքէն հերքում է միայն այն աւանդութիւնը, որ իբր թէ Կարթագինայի հերոսը ապաւինել է Հայոց ոյս Աստարքիաս թագաւորին և նրա ինդիբուզ շինել տուել Արտաքսի ափին Երտաշատ քաղաքը։

Հռոմէացոց համար Հայաստանն ու նրա թագաւորները կարեսրութիւն են ստանում միայն այն ժամանակ, երբ սոքա շրաւականանալով իրանց բաւական ընդարձակ

1) Մոմքէնի մէջ Հայաստանի անունն յիշում է առաջին անգամ, եթէ նա որոշում է եւրոպական ազգերի սկզբնական ընակատեղին և ասում է, որ Եփրամի ափերը, Հայաստանն ու Պարսկաստանը եւրոպական ցեղեր ոքքան պէտք է եղած լինին, երբ այդ ցեղը միջին Ասիայից գէսի արևմտահարաւ շարժուեցաւ։

մասով, դուրս են գալիս աշխարհակալութեան յետևից ընկնում և ընդարձակ նուաճումներ անելով բնականաբար ընդհարում հռոմէական շահերի հետ։ Այդ պատահեցաւ Մեծն Տիգրանի ժամանակ, որ Արտաքսիասի հիմնած պետութիւնն այնպիսի փառահեղութեան հասցրեց, որի նմանը հայերն այնուհետև չտեսան։

Տիգրանի պատմութիւնը կողքի կողքի առաջ է գնում նրա ժամանակակից և գաշնակից Պոնտոսի Միհրդատ թագաւորի պատմութեան հետ<sup>1)</sup>։ Միհրդատ (130—63) դուրս գալով պոնտական իշխանութեան նեղ սահմաններից, մի պատկառելի պետութիւն է կազմում Փ. ասիական մանր տէրութիւններից և Փոքր Հայքն ևս կախման մէջ է գնում Պոնտոսից։ Սակայն նրա համար աւելի կարևոր էր այն, որ նա սերտ գաշնադրութեան մէջ մտաւ Մեծն Հայաստանի թագաւորի հետ։ Նա ոչ միայն իւր Կլէոպատրա աղջկան կնութեան տուաւ Տիգրանին, այլ և խակապէս նա էր, որի աշխացութեամբ Տիգրանն Արշակունեաց (պարսից) տիրապետութիւնից ազատուեցաւ և նոցա տեղը բռնեց Ասիայում, թւում է, թէ նոքա պայմանաւորուեցան, որ Տիգրանն Ասորիքն ու Միջին Ասիան, իսկ Միհրդատը Փ. Ասիան ու Սև ծովի ափերը նուածեն և այդ գործում իրար փոխադարձաբար պէտք է օգնէին։ Անկասկած այդ միաբանութեան բուն պատճառը աւելի գործունեայ և ընդունակ Միհրդատն էր, որ մտածում էր դրանով իւր քամակն ապահովել և մի զօրաւոր գաշնակից ճարել<sup>2)</sup>։

1) Մինչդեռ Միհրդատի ներքին ու արտաքին կեանքի մասն մտնելամասն տեղեկութիւններ ենք գտնում Մոմզէնի մէջ, Տիգրանի մասին ընդհակառակը՝ համեմատած նրա երկարատեւ ու բազմազան թագաւորութեան հետ, շատ քիչ բան կայ։ Այս հանդամանքը թերեւըների մասին։ «Այս պատմութեան մէջ (վերջիշեալ գլուխները) առանց գժուարութեան կարելի է գտնել Առաջին Միհրդատեան կուրի մանրամասնութիւնները։ Բայց ամերող պատմութիւնը պարզապէս խոռոշուած, օտար յաւելումներով ճօխացրած է և յատկապէս հայրենասիրական միտումով փոխած է Հայաստանի վրայ։ Յետագայում ըռլորովին նոյն ճանապարհով կը ասուին յաղթելը հայերին է վերագրած։ Այս արեելեան տեղեկութիւններին պէտք է մէծ զգուշաւթեամբ վերաբերուել հէնց նրա համար, որ զոքազուա գոււա գողովրդական-աղդային զրոյցներ չեն, այլ մասամբ Յովոնիսից, Խւսեբիսից և այլ։ Վ գարում քրիստոնեաներին լաւ յայտնի աղքիւըներից-ձուլուած են հայկական աւանդութիւնների հետ ի մի, մասամբ էլ յունական պատմական զրոյցներից և անկասկած Մովսիսի հայրենասիրական ոգուն էլ շատ բան զանցած է։ Խնձքան էլ որ մեր արեմտեան աղքիւըները պակասւուր լինին, արեելեան աղքիւըներին դիմելը այսպիսի և այլ գէպքերում (ինչպէս անում է այդ անքնապատ Սէն-Մարտէնը), աւելի ևս գործը կը մթնացնէ։

Գ. Ա.

2) Ցես II հատոր, երես 275։

Այսուհետև այդ գաշնակցութիւնը նրանով արտայայտուեցաւ, որ Տիգրան մի քանի անդամ հայկական զօրքերով կապագովկիա մտաւ այնտեղ թագաւորեցնելու իւր գաշնակցի թեկնածու Արիարթին (Ariarathes), մինչդեռ հռոմէացիք հակառակ լինելով Միհրդատեան ազգեցութեան զօրանալուն, ցանկանում էին Արիարարդանի թագաւորութիւնը։

Երբ նոր զօրացած Միհրդատ մի ընտիր բանակ է կազմում (որի մէջ կային և հայեր) ու արեմուտք արշաւում, հասնում նոյն իսկ Յունաստան, հռոմէացիք Սուլյային արեելը են ուղարկում։ Սուլյան Առաջին Միհրդատեան պատերազմը փառաւոր յաջողութեամբ գլուխ է բերում և Փ. Ասիայ կառավարութիւնը իւր տեղապահ Լուկուլլոսին յանձնելով Հռոմ է գառնում։ Միհրդատ ստիպուած էր ճանաչել հռոմէական ոյժի գերիշխանութիւնը և ընդունել նոցա առաջարկած գալը 81 թ<sup>ւ</sup><sup>4)</sup>։

4) Մոմզէն համառառակի մէջ ըերելով Մ. Խորենացուց Բ գրքի Ժ. Ժ. գլուխների բավանդակութիւնը՝ մի քանի խօսք էլ աւելացնում է, որի մէջ երեսում է նրա հայեացքը Մ. Խորենացու և ընդհանրապէս արեելեան աղքիւըների մասին։ «Այս պատմութեան մէջ (վերջիշեալ գլուխները) առանց գժուարութեան կարելի է գտնել Առաջին Միհրդատեան կուրի մանրամասնութիւնները։ Բայց ամերող պատմութիւնը պարզապէս խոռոշուած, օտար յաւելումներով ճօխացրած է և յատկապէս հայրենասիրական միտումով փոխած է Հայաստանի վրայ։ Յետագայում ըռլորովին նոյն ճանապարհով կը ասուին յաղթելը հայերին է վերագրած։ Այս արեելեան տեղեկութիւններին պէտք է մէծ զգուշաւթեամբ վերաբերուել հէնց նրա համար, որ զոքազուա գոււա գողովրդական-աղդային զրոյցներ չեն, այլ մասամբ Յովոնիսից, Խւսեբիսից և այլ։ Վ գարում քրիստոնեաներին լաւ յայտնի աղքիւըներից-ձուլուած են հայկական աւանդութիւնների հետ ի մի, մասամբ էլ յունական պատմական զրոյցներից և անկասկած Մովսիսի հայրենասիրական ոգուն էլ շատ բան զանցած է։ Խնձքան էլ որ մեր արեմտեան աղքիւըները պակասւուր լինին, արեելեան աղքիւըներին դիմելը այսպիսի և այլ գէպքերում (ինչպէս անում է այդ անքնապատ Սէն-Մարտէնը), աւելի ևս գործը կը մթնացնէ։

Ա. 300 եր. Ճանօթ.

Հռոմէացոց Միհրդատի հետ կուած դաշինքը գոնէ արտաքուստ չէր վերաբերում Տիգրանին, իսկ Տիգրան հետզհետէ զօրանում էր և առաջ դալիս. նա վերջը խիստ սպառնական դիրք ըննեց հռոմէական տէրութեան նկատամբ: Վերջինիս և Պոնտոսի ու Հայաստանի թագաւորք ների մէջ եղած լարումը ոչ միայն չէր թուլանում, այլ և գնարդվ աւելի զօրեղանում էր: «Հայաստանի թագաւոր Տիգրանն անխնայ կերպով նուաճումներ էր անում: Պար թեները, որոնց պետութիւնն արդէն քայլացուել էր այդժամանակ ներքին անկարգութիւնների պատճառով երկառատես վէճերի համար, աւելի ու աւելի Ասիայի ներսերը մղուեցան: Հայաստանի, Միջագետքի և Իրանի մէջ ընկած երկիրներից Կորդուէնը (Հիւսիսային Քիւրդիստան, Կորդուաց աշխարհ), Ատրոպատենական Մարտոստանը պար թեական իշխանութեան տակից ելնելով դարձան հայկական աւատական թագաւորութիւններ և նինուէի տէրութիւնը (Մօսուլ) գոնէ առ ժամանակ ստիպուած եղաւ Հայոց գերիշխան հովանաւորութեան տակ մտնել: Միջագետքումն ևս, յատկապէս Մծբնի (Nisibis) մէջ և նրա շուրջը հայկական տիրապետութիւնն հաստատուեցաւ: Միայն ինչպէս երեսում է, հարաւային՝ մեծ մասամբ ամայի մասին չտիրեց այս նոր մեծ արքան և յատկապէս Տիգրիսի վրայ Սելեկեա քաղաքը նրան հպատակութիւն ցոյց չտուաւ: Եղեսիայի կամ Օսրօէնի (Osroene) իշխանութիւնը նա յանձնեց արաբական շըմովիկ ցեղերից մէկն, որ նա հարաւային Միջագետքից այստեղ բերաւ ու ընակեցրեց, որպէս զի այդ ցեղի միջոցով Եփրատի վրայով անց ու դարձն ու առետրական մեծ պողոտան ձեռք ձգի: <sup>1)</sup>

1) Եղեսիայի իշխանութիւնը, որի հիմնարկութիւնը ըստ տէղական ժամանակագրութեան 134-ին է եղել մի փոքր ժամանակից յետոյ անցնումէ Աթքարի և Ամանայի Արաբական հաշըստութեան ձեռքը, որոնց պատահում ենք մենք յետագայում: Այդ հանգամանքը պարզապէս կամ ունի այն քաղմաթիւ առաջնարկի գաղթականութեան հետ, որոնց Տիգրան Մեծ բերաւ

«Սակայն Տիգրան չբաւականացաւ միայն Եփրատի առ քենցեան ափերը նուաճելով: Ամենից առաջ Կապագովիկան էր նրա յարձակման նպատակակիւտը. և այդ անդէն ու անպաշտպան երկիրն իւր զօրեղ հարեւանից աւերիչ հարուածներ ոստացաւ: Տիգրան իւր Կապագովիկայից նրա արեւելեան մասը՝ Մելիտինէն և միացրեց հանգիպակաւ հայեաց հայկական Սոֆէն նահանգին, որով նա իւր ձեռքը ձգեց հայկական ու Փ. ասիական առեւտրական մեծ պողոտան: Սուլլայի մահից յիտոյ հայկական զօրքերը նոյն իսկ Կապագովիկա մտան և նրա մայրաքաղաք Մաժարի (յետպայում Կեսարիա) և այլ 11 յունական կաղմակերպուած քաղաքների բնակիչներին Հայաստան տեղափոխեցին: Սելեկեան տարրալուծուած թագաւորութիւնն էլ չկարուցացաւ ընդգիւմութիւն ցոյց տալ Ասիայի այս նոր արքայից արքային: Այստեղ՝ եղիպատական սահմանից հարաւ մինչև Սարատոնի Աշտարակը (Կեսարիա) իշխում էր հրէական թագաւոր Աղէքսանդր Իաննէասը (Ianneas), որ իւր ասորի, արաբացի և եղիպատացի հարեւանների ազատ քաղաքների հետ կոռուելով իւր իշխանութիւնը քայլ առ քայլ ընդարձակել ու ամրացրել էր: Ասորիի մեծամեծ քաղաքները՝ Դաղա, Սարատոնի Աշտարակը, Պտղոմիս, Բերէա փորձում էին իրանց անկախութիւնը պահել մերթ որպէս

և Եղեսիա, Կալիրիա (Kallirhoe) և Խառան քաղաքներում ընակեցրեց (Plin. h. n. 5, 20, 85, 21, 86-28, 142): Այդ մասին Պլուտարքոսն էլ պատմում է, որ Տիգրան վրանաբնակ արաբների բարքերը փոխելով, իւր պետութեան մօտերքում ընակեցրեց վաճառականութիւնը նոցա միջոցով զօրեղացնելու համար: Թերեւս այս պիտի հասկանալ այնպէս, որ բեգունները, որոնք սովոր էին իրանց շըջաններում առեւտրական պողոտաներ ըտնալու և գրանց վրայ շինած մաքսատներում ապրանքներից մաքս առնելու (Սարատոն 14, 748), Հայոց թագաւորին մի տեսակ մաքսանների տեղ էին ծառայում և պետական էին թէ իրանց և թէ նրա համար մաքս առնել Եփրատի վրայով անցնողներից: Այս օրոբէնեան արաբները (Orei Arabes), Անձակէս կոչում է նոցա Պլինիուսը, պէտք է որ նոյն այն արաբները լինին Ամանոս սարից թագաւոր որոնք նուաճուեցան Աֆրանուսից (Plut. Romp, 39):

աղաս հասարակութիւններ և մերթ այսպէս կոչուած բըռա-  
նաւորների (Tyrannies) իշխանութեան ենթարկուելով. և  
ամենից շատ Անտիոք մայրաքաղաքն էր, որ համարեա բո-  
լորովին անկախ էր: Դամասկոսն ու Լիբանանի հովիտները  
նուաճել էր Նաբատների իշխան Արետասոր Վերջապէս  
Կիլիկիայում տիրապետում էին կամ ծովահեն աւազակ-  
ները և կամ հռոմէացիք: Եւ ահա հազար պատառ եղած  
այս թագի համար Արևելեան տան թագաժառանդներն ու  
իշխանները յամառաբար կոխ էին մզում, կարծես նոքա  
ուզում էին թագաւորութիւնը ծաղը և ծանսկի առար-  
կայ դարձնել: Ասորիքից, որ Լայոսի տան նման գատա-  
պարտուած էր յաւիտենական վէճերի և խառնակութիւն-  
ների, բաժանում էին հէնց նրա սեփական հպատակ-  
ները և նոյն իոկ պահանջներ էին անում ձեռք բերելու  
եղիպտական դահը, որ Ազերաանդը Ա-ի անժառանդ  
մեռնելով՝ թափուր էր մնացել: Ահա և դրա համար Տիգր-  
ան թագաւորը անխնայ նուաճութիւնը էր անում: Արևելեան  
Կիլիկիան հեշտութեամբ հպատակուեցաւ նրան և Առլ  
(Soloi) քաղաքի բնակիչները կապագովկեցոց նման Հա-  
յաստան բերուեցան: Տիգրան տիրեց նոյնպէս զէնքի ու-  
ժով Ասորիքի վերին մասին (բացի Որոնդ գետի ափին  
շինած քաջ ընդդիմագրութիւն ցոյց տուող Արևելիս քա-  
ղաքից) և Փիւնիկէի մեծագոյն մասին: 74 թ. Հայերը  
գրաւեցին Պտղոմէիս քաղաքը և արդէն հրէական տէրու-  
թեան լուրջ վասնդ էր սպառնում: Արևելիսանց հին մայ-  
րաքաղաք Անտիոքը Տիգրանի արքայակայեաններից մէկն  
եղաւ: Արդէն 83 թ. Սուլլայի և Միհրգատի գաշնադրու-  
թեան հետեւեալ տարին, ասորական տարեգիրները Տիգ-  
րանին ներկայացնում են օրպէս իրանց երկրի տէր և  
Կիլիկիան ու Ասորիքը որպէս հայկական սատրապութիւն-  
ներ արքայից արքայի կուսակալ Մագադատի (Magadates)  
իշխանութեան տակ: Նինուէի Սաղմանասար և Սենեքե-  
րիմ թագաւորների ժամանակը կարծես յետ էր դարձել  
Արևելեան բռնակալութիւնը (despotismus) նորից ծանրա-  
ցաւ ծովագնեայ Ասորիքի տուետրական աղդաբնակու-

թեան վրայ, ինչպէս երբեմն Տիւրոսի և Սիդոնի վրայ:  
Ասիայի մեծ պետութիւնները նորից Միջերկրական ծովին  
հասան: Կիլիկիոյ և Ասորիքի ծովափերում նորից պատ-  
րաստ էր կէս միլիօն զօրքը Ինչպէս երբեմն Սաղմանա-  
սար և նաբուգոստոսոսոր հրէաններին Բարելոն գերեվարե-  
ցին, այնպէս էլ այժմ՝ նոր մեծ պետութեան բոլոր սահ-  
մաններից՝ Կորդուէնի, Աղբարէնի, Ասորեստանի, Կիլի-  
կիոյ, Կապագովկիոյ բնակիչները յատկապէս յունական  
կամ կէս հելլենական քաղաքացիները ունեցած չունե-  
ցածով (եթէ թողնէին՝ յարքունիս կը գրաւուէր գոյքը)  
ստիպուած էին տեղափոխուել նոր արքայական քաղաքը,  
որ մէկն էր այն հսկայական քաղաքներից, որոնք աւելի  
շուտ աղգերի ոչնչութիւնն են ցոյց տալիս, քան իշխողի  
մեծութիւնը և որոնք Եփրատի կողմերում արքայական  
գահի իւրաքանչյուր փոփոխութիւնից յետոյ նոր սուլթա-  
նի կարող հրամանի ներքոյ կարծես գետնից էին բուռ-  
նում: «Տիգրանի քաղաքը» Տիգրանակերտը, որ հիմնուած  
էր Միջագետքի սահմաններում Տիգրիսի աջ ափին և  
պէտք է Հայոց նոր ձեռք բերած երկիրների մայրաքա-  
ղաքը լինէր, <sup>1)</sup> Նինուէի և Բարելոնի պէս մի քաղաք դար-  
ձաւ, 50 կանգուն բարձրութիւն ունեցող պարիսպներով  
և սուլտանիզմի անբաժան ընկեր պալատով, պարտէզնե-  
րով և զէնքի ու զօրքի կայեաններով (parkanlage): Այս նոր  
արքայից արքան ուրիշ բաներում ևս չգտաւաճանեց սուլ-  
տանական սովորութեան: Ինչպէս որ ընդհանրապէս մա-  
նուկ արեւելքում թագաւորները տղայական երեւակայու-  
թեամբ միշտ պէտք է թագ ի գլուխ երևային, նոյնպէս  
էլ Տիգրան ըստ այդմ, հասարակութեան յայտնուելիս՝  
երեւում էր իւր նախօրդների՝ Դարեհի և Քաերքսէսի  
պերճութեամբ ու փառահեղութեամբ. Տիգրանի պարեգո-  
տով, կէս սպիտակ կէս ծիրանի ներքնազդեստով, լայն  
եղբայ սրնքազդեստով, բարձր գլխապատով (Turban-  
փաթթոց) և արքայական ապարօշով. ուր էլ որ նա լինէր,

<sup>1)</sup> Այդ քաղաքը Պիարէքեթի մօտ չէր գտնւում, այլ  
Սծընի և Տիգրիսի մէջ, ոչ հեռու այս վերջնից:

թէ դնալիս և թէ կոնգնելիս, նրան ծառայում էին և  
ողբեկցում ստրկի նման չըրս «թագաւորներ»:<sup>1)</sup>

Այսպիսի շքեղութեան և փառքի հասած նոր արքա-  
յից արքան ի հարկէ ոչ մի պատճառ չունէր հռոմէացոց  
հետ կոիւ սկսելու, քանի որ «Հռոմն առանց պատերազմի  
նրա ձեռն էր տալիս իւր բոլոր դաշնակիցներին»: Բայց  
միւս կողմից Տիգրանի նախկին դաշնակից Միհրդատը,  
որ առաջ Տիգրանից էլ աւելի ճոխութեան շքեղութեան  
էր հասել, այժմ՝ հռոմէացիներից սեղմուած, հնարներ էր  
փնտում իւր պետութիւնը նորից ընդարձակելու և կոր-  
ցրած նահանգները կրկին գրաւելու: Նա իւր ուժերն հա-  
ւաքելով նորից պատերազմ՝ է յայտարարում հռոմէա-  
ցոց 75-4 թ. ձմրանը՝ նրա առաջին ջանքն է լինում այժմ՝  
նորից դաշն կոել Տիգրանի հետ: «բայց այդ անհեռա-  
տես մարդը մերժումէ իւր աներոջ առաջարկը»: Միհրդա-  
տին յաջողուում է մի զօրեղ բանակ կազմել կրկին և ար-  
շաւել արեւուուք՝ Փօքր Ասիոյ խորքերը, բայց հռոմէա-  
ցոց կուսակալ Լուկուլոսը նրան վերջնական կերպով  
յազմահարում է Կաբէյրա<sup>2)</sup> քաղաքի մօտ և Միհրդատ  
կորցնելով իւր ամբողջ զօրութիւնը և հալածուելով Պար-  
ապէսսից (որ այդ ժամանակ մի փոքրիկ վաշտի առաջնորդ-  
էր), գալիս է Հայոց թագաւորի սահմաններն ապահնուում  
72 թուին» Սրբայից արքայի երկրում նա ապաստան  
գտաւ, բայց միայն այդքան ձիշտ է, Տիգրան իւր փա-  
խստական աներոջ թագաւորական պատուով ընդունել  
տուաւ, սակայն նա մի անգամ էլ չկոչեց իւր պալատը,  
այլ պահեց նրան հեռաւոր սահմանային մի տեղում, որ-  
ուեղ Միհրդատ մի տեսակ պատուաւոր բանտարկեալի  
կեանք էր վարում:<sup>3)</sup>

Դրանից յետոյ հռոմէական զօրքերը հեղեղեցին Պան-  
տական թագաւորութիւնը, որի ակրոջ, ինչպէս երկումէ,

1) Տես III հատոք 48—51 եր.

2) Կող Կեսարեաւ այժմ՝ նեկոսը՝ Ամասիայից ուղիղ արեւելք:

Գ. Ա.

3) III 63.

դոնէ առ այժմ չէր ուղում Հայոց թագաւորը հայրենի  
գահի վրայ նստեցնել, Միհրն այժմ՝ մի քանի անգամ՝  
երկուստեր առիթ էր եղել Հռոմէացոց և Տիգրանի մէջ  
պատերազմ՝ բացուելու, բայց թէ Տիգրան և թէ ծերա-  
կոյտը խոյս էին տուել. առաջնորդ՝ որովհետեւ կարիք չու-  
նէր գրան, զի առանց այդ էլ նա նուաճումներ էր անում,  
իսկ երկրորդը՝ որովհետեւ քաղաքականապէս նեղ դրու-  
թեան մէջ էր: Աակայն քաջ և հայրենասէր Լուկուլոս  
վճռեց, ինչ էլ որ լինի պատերազմ սկսել Հայոց թագա-  
ւորի գէմ և համարեա հակառակ ծերակոյտի, Տիգրանի  
մօտ Անտիոք մայրաքաղաքը մարդ ուղարկեց իւր ձեռքն  
յանձնելու Միհրդատ արքային. մանաւանդ որ Հայոց  
թագաւորը անձնապէս վիրաւորել էր նրան իր՝ նրան գրած  
թզթում աիտղոսը բաց թողնելով:<sup>4)</sup> Տիգրանից Պանտացոց  
թագաւորին ուղելով, Լուկուլոս միենայն ժամանակ պա-  
տերազմի շարժառիթ էր մէջ քերում: և որովհետեւ Հայոց  
թագաւորը մերժեց, ուստի Լուկուլոս իւր ձեռքի տակ  
եղած սակաւաթիւ, բայց վարժ ու պատերազմների մէջ  
եփուած 2 լեգէոն կամ 15,000 զօրքով Եփրատն անցաւ,  
որով սկսուեցաւ Հայ հռոմէական պատերազմը 69 թ:

Լուկուլոս ուղղուեցաւ գէպի այն մեծ պողոտան,  
որ ձգեւում էր Մծբինից հս. և միացնում էր Հայոց նոր  
շինած մայրաքաղաք Տիգրանակերտը<sup>2)</sup> հին մայրաքաղաք

1) Գարագաշեան հին ու նոր պատմիչներից առնելով  
գրում է. «Դիւրին է գուշակել զզարմոնս Տիգրանայ, որ ար-  
քեալն էր այնչափ յաջողութեամբ, ընդ պատգամաւորութիւն  
Հուկագղեայ՝ տալ և ձեռս զՄիհրդատ ի ձաղանա: Որ աւելի  
յանդեռութեան էր՝ զօրտգարն ի նամակի գոէր: «առ Տիգրան  
աքքայ» փոխանակ աքքայից արքայի, որպէս սպար էր նա տալ  
գրոշմել ի դահնեկանս իւր... Տայր պատասխանի Տիգրան թէ  
առանց թեկն ինչ ածելոյ աներոցն իւրում՝ չկամէը ազարտել  
զանձին պատիւ տալով զնա ի ձեռս: և առ հատուցանելոյ  
զփոխարէնն թշնամանացն Հուկուղեայ՝ չետ նմա ի նամակին  
իւրում զյորջոջանաց անունն «Փրմակերատոր»: Գարագչ. Քն.  
պատմ. II 140. Գ. Ա.

2) Որ Տիգրանակերտը հաւանօքն գտնեում է Մարդեն

Արտաշատի հետո Արքայից արքան Տիգրանակերտումն էր և քիչ առաջ վերադարձել էր Ասորիկից յառաջուց՝ ի նկատի ունենալով հռոմէացոց հետ հետզհետէ բարդուող խնդիրները՝ աշխարհակալ ծրադիրները Միջերկրական ծռվի նկատմամբ յետաձգելով։ Նա հէնց նոր էր ծրագրում Կիլիկիայից և Լիկասնիայից յարձակուել հռոմէական մասի Փաքր Ասիոյ վրայ և խորհում էր, թէ արդեօք հռոմէացեք իսկոյն կը թողնեն Ասիան, թէ գուցէ նախ քան այդ, նոքա Եփեսսի մօտ մի ճակատամարտ կը տան—որ յանկարծ իմացաւ Լուկուլլոսի յառաջիսաղացութիւնը, որ սպառնում էր Տիգրանին Արտաշատի հետ յարաբերութիւնը խղելուն։ Բօթաբերին նա դլխատել տուաւ, սակայն ժանր իրականութիւնը դրանով չփոխուեցաւ։ Նա թողեց իւր նոր մայրաքաղաքը և Հայաստանի ներսերը քաշուեցաւ, որպէս զի այնտեղ հռոմէացոց դէմ զինուի. մի բան, որ մինչև այժմ չէր արել։ Նոյն միջոցին Միտրոբարդանէսը պէտք է իւր մօտ եղած զօրքերի և հարեւնն բեղուին ցեղերից շտապով կազմուած խմբերով զբաղեցնէր հռոմէացոց։ Սակայն հռոմէական բանակի յառաջապահը ցրեց Միտրոբարդանէսի զօրքը իսկ Սեբստիլ զօրավարի խըմքական ջարդեց արարներին։ Լուկուլլոս դրաւեց Տիգրանակերտից Արտաշատ տանող ճանապարհը և հէնց այն պահուն, երբ հռոմէական մի զօրաբաժին Տիգրիսի աջ ափով հետեւում էր դէպի հիւսիս խուսափող արքայից արքային, Լուկուլլոսն ուղղակի ձախ դիմեց և հասաւ Տիգրանակերտի առաջ։ Նետերի այն անընդհատ տարափը, որով պահնակ զօրքը հանդիպեց հռոմէացոց, և պաշարման մեքենաների նեփուով այրումը հռոմէացոց համար իրանական պատերազմների նոր դժուարութիւններ առաջ բերին։ Քաղաքը պաշտպանում էր ամրոցապետ քաջ Մանկէսը, մինչև որ վերջապէս լայնածաւալ պետութեան

(Mardin) կողմերում և Մծբնից հեռու 2 անցքերի վրայ, ցոյց է առաջ Տաշան (über die Lage von Tigranakerta, Abh. der Berl Akademie 1880) ուսումնասիրելով խնդիրը հէնց իւր տեղում, այսպէս նշան որոշած անդը դեռ անկասկած չէ։

ամեն կողմերից և նրա սահմանակից՝ հայ զօրահաւաքներին մատչելի տեղերից արքայական պահեստի զօրեղ գընդեր հաւաքուեցան և հիւսիս արևելեան անցքերով մայրաքաղաքը փրկելու հասան։ Միհրդատեան պատերազմների մէջ փարձուած զօրավար Տաքսիլ խորհուրդ տուաւ ճակատամարտից խուսափել և հեծելազօր դնդով շրջապատել հռոմէական փոքրիկ խումբն ու սովամահ անել։ Սակայն երբ թագաւորը հռոմայեցի զօրապետին տեսաւ, որը վճռել էր առանց պաշարումը վերցնելու ճակատ տալ մօտ 10,000 մարդով իրանից 20 անգամ զօրեղ թշնամուդէմ, և յանդուդն կերպով անցնում էր երկու բանակները բաժանող գետը, երբ նա մի կողմից շրջահայեց այդփոքրիկ խումբը, որ «պատգամաւորութեան համար չափազանց քիչ», միւս կողմից իւր անհնարին (անթիւ) զօրակոյարը, որի մէջ իրար էին հանդիպում Սև ու Կասպից ծովերի աղդութիւնները և Միջերկրականի և Պարսից ծոցի ժողովուրդները, որի ահաւոր, երկաթապատ նիզակագէն հեծեալներն անդամ բաղմաթիւ էին Լուկուլլոսի ամրող զօրքից և որի մէջ պակաս չէր նաև հռոմէական ձեռվ զինուած հետեւակ զօրքը—այն ժամանակ վճռեց նա անյապաղ թշնամու տենչացած ճակատն յօրինել։ Բայց մինչդեռ հայերը կուտի էին պատրաստում, Լուկուլլոսի որատես աչքը նկատեց, որ նոքա ուշացել են գրաւելու մի բարձրութիւն, որին պէտք է տիրէր նրա հեծելազօրը Լուկուլլոսն շտապեց 2 վաշտով գրաւել այդ բարձրունքը, մինչդեռ նոյն միջոցին նրա թոյլ հեծելազօրը կողմնակի յարձակմամբ աշխատում էր թշնամու ուշագրութիւնը դարձնել այդ կէտից։ Հէնց որ զօրապետը բարձրունքին հասաւ, իսկոյն նա իւր փոքրիկ գունտը շուռ տուաւ ու թշնամու հեծելազօրի քամակն անց կացրեց։ Հեծելազօրն ամբողջապէս շփոթուեցաւ և ընկաւ դեռ կարգին չկազմակերպուած հետեւակազօրի վրայ, որը փախուստ տուաւ առանց նոյն իսկ կոխ սկսելու։ Յաղթողի բիւլետիւ

նը<sup>4)</sup>), թէ ընկան 100,000 հայ և 5 հոսուայեցի և թէ թագաւորը դլսապատն ու ապարօշը ձգած ծածռկ անհանչելի կերպով սակաւամիւ այրուձիով փախստեամբ աղատուել է—իր վարպետ Սուլլայի լակոնական ձեռզ կազմուեցաւ Յամենայն դէպս 69 թ. հոկտեմբերի 6-ին տարած յաղթութիւնը կը մնայ միշտ իրբեւ Հռոմի ռազմական պատմութեան մէջ ամենափայլուն առաջերից մէկը:

Այդ յաղթութիւնը հետեւանքներով որքան հարուստ, նպնջան էլ փառաւոր էր Տիգրիսից հարաւ Պարթևներից և Ասորիքից Խոլած բոլոր երկիրները դրանով ռազմագիտորէն (strategisch) դուրս եկան Հայոց տիրապետաւթիւնից և առանց այլայլութեան յաղթողի ձեռքն անցան: Առաջին օրինակն եղաւ հէնց նորահաստատ երկը բորդ մայրաքաղաքը: Նրա միջի բազմաթիւ յոյն բըռնառ զրոսիկ գաղթականները բերդապահ զօրքերի դէմ ենելով, հռոմէացոց խմբերի առաջ ըաց արին քաղաքի դըսները և Տիգրանակերտը թողնուեցաւ զինուորների աւարառութեան: Այդ քաղաքն հաստատուած էր նոր պետութեան համար և յաղթող բազի մի զարկով կործանուեցաւ նրա հետ մէկ տեղ: Հայոց սարապ Մագաղաւար արդէն հաւաքել էր Կիլիկիայից և Ասորիքից բոլոր զօրքերը Տիգրանակերտն ազատող զնդին օգնելու: Լուկուլոս դարձաւ Ասորիքի հիւսիսային մասը՝ Կոմմոգէնէ և յարձակմամբ առաւ Սամոստ մայրաքաղաքը: Նա չհասաւ բուն Ասորիքին, ուկային մինչեւ Կարմիր ծով տարածաւող զանազան իշխանութիւններից և համայնքներից—յոյներից ասորիներից, հրէաներից, արաբներից—պատգամաւորներ եկան յաղթողին իրանց հպատակութիւնն յայտնելու և նրան գերիշխան ընդունելու: Նոյն իսկ Տիգրանակերտից արևելք ընկնող Կորդուէնի իշխանն ևս հպատակութեցաւ նրան: Սակայն Մծրինում, ուրեմն և Միջա-

<sup>4)</sup> Լատիներէն խոլա խոպի նուազականն է, որ նշանակում է տամասկ. լուր, աեղեկութիւն միորեկ հետաքրքր իրութեան մասն:

գետքում գեռ կանգուն էր Հայոց արքայի եղբայր Դուռասի ոյժը: Լուկուլոս ամեն տեղ յայտնւում էր որպէս պաշտպան հելլէն քաղաքացիութեան: Կոմմոգէնում նա իշխան կարգեց Սելևկեան տնից Անտիոքոս անուն մէկին: Անտիոքոս Ասիացուն, որ հայերի քաշուելուց յետոյ Անտիոքը էր վերադարձել, Լուկուլոսը Ասորիքի թագաւոր ճանաչեց: Բանի Տիգրանակերտ բերած գաղթականներին նա արձակեց իրանց բնակութեան տեղերը: Արքայից արքայի անհամար պաշար՝ ու գանձը (գարի վերցրին 30 միլիոն միլիոն տալեր<sup>1)</sup>) հնարաւոր գարձը Լուկուլոսին համար պատերազմի ծախքը լցուցանել առանց պետութեան գանձարանից փող ուղելու և իր զինւորներից խրաքանչիրին, բայց ամենառատ պաշարից, տալ նաև իրբեւ պարզե 800 դենար (240 տալեր):

«Հայոց արքայից արքան խիստ խնարհեց: Նա թոյլ բնաւորութեան տէր էր, ամրարաւաւն՝ յաջողութեան մէջ, իսկ գժբախտութեան գէպրում հեշտութեամբ յուսահատող»<sup>2)</sup>

Անշաւշտ Տիգրան կը շտապէր դաշն կապել և հաշտութիւն առաջարկել հոսմէացի յաղթողին, եթէ որ մինէր խորամանկ և շահախնդիր Միհրդատը, որ 70 թ. ազատուելով իւրքանակերտ արգելումից, իւր թագաւորութեան սահմաններն էր գնացել, որպէս զի այնտեղից սպառնայ թշնամուն և այժմ ամեն չանք գործ էր զնում, որ Հայոց թագաւորը չհաշտուի յաղթողի հետ, որից յետոյ արդէն իւր թագաւորութիւնը կրկնն ձեռք բերելու յոյսը բոլորովին կանհետանար նրա համար: Ուստի նա խորհուրդ է տալիս Տիգրանին ինչ էլ որ լինի շարունակել պատերազմը և այդ փորձուած վախտունամեայ ծերունին, «որ համարեա հօր տեղ էր Հայոց արքայից արքայի համար և միջոց ունէր այժմ անձնապէս աղդել նրա վրայ, իւր եռանդով նուա-

<sup>1)</sup> Մէտալերը մօտ 3 մարք է. 150 կոպ.

<sup>2)</sup> III 68—71.



ճեց այդ թայլ մարդուն և ոչ միայն պատերազմը շարունակելու արամագրեց, այլ և իրան յանձնել պատերազմի քաղաքական և ռազմական վարումը։ Միհրդատի խորհրդով Տիգրան դիմում է Պարթեաց Հրահատ (Phraates) թագաւորին գաշնադրութեան համար, սակայն ուս քաջ կշռելով իրերի վիճակը, լու է համարում հռոմէացոց հետքարեկամ մնալ։ Այն ժամանակ երկու արքաները դիմում են մի այլ միջնորդ՝ պատերազմին կրօնական ազգային բնաւորութիւն տալ՝ — արեւելքի ինքնուրոյնութիւնը պաշտպանել արեմուտքի յարձակումներից։ Եւ ահա այդ նպատակով ամեն կողմերից գալիս հասնում են անթիւ ու անհամար մարդիկ։ Միհրդատ աւելի ուշք էր գարձնում ասիսկան այրուծիու վրայ, մի մաս, որ անհամեմատ աւելի թոյլ էր հռոմէացոց մէջ։ Պատերազմի սասպահէզը որոշուեց, որ Հայաստանը լինի, ուր գեռ սոր չէին կոխել թշնամիները և որ «բնական յարմարութիւնների, ինչպէս նուև ընակիչների հայրենասիրութեան պատճառով շատ որաշաճ էր այդ տեսակ պատերազմափարական եղանակին»։

Լուկուլսու ճայած մի կողմից սենատի գժդոհութիւններին և միւս կողմից զօրքի ու զանազան զօրապետների տրամաշներին, իւր զօրքն առաջ տարաւ և առենիւլով, որ Տիգրան ոչ պատրաստում էր հաշտութիւն տուածարկելու կամ, ինչպէս Լուկուլսոն ուզում էր, ոչ էլ մի երկրորդ գլխաւոր ճակատ տալիս, որոշեց Տիգրանակերտից գժուարանցանելի լեռնային տեղերով մտնել արեւելեան Եփրատի (կամ Աւածանի, այժմ Մուրագ չայ) հռվիտը։ Վանայ ծովի արեւելեան ափերով, այդտեղից էլ անցնել Արաքսի գաշտավայրը, որտեղ Արարատի հիւսիսին փեշերի վրայ բուն Հայաստանի մայրաքաղաք Արտաշատն էր շինուած արքայական ժառանգական պալատով ու հարեմով հանդերձ։ Նա սպառնալով տոհմական թագաւորակայանին, յոյս ունէր Տիգրանին ստիպելու ճակատ տալ կամ ճանապարհին կամ առ նուազն Արտաշատի առաջ։ և մի փոքրիկ վաշտ թողնելով, առաջ է շարժւում։ «Ստեկայն պատերազմական գործողութիւնների համար ամե-

նամեծ դժուարութիւն յարուցանազը Հայաստանի չափազանց կարծ ամառն էր։ Ծովի մակերեսոյթից 5000 կամ աւելի բարձր ընկած Հայկական բարձրաւանդակի վրայ Էրզրումի մոտ հացահատիկը բուսնում է միայն յունիսին, իսկ սեպտեմբերին հնձելիս ձմեռն արդէն վրայ է հասնում։ Ամենաշատը 4 ամսուայ ընթացքում պէտք էր հասնել Արտաշատին և վերջացնել պատերազմական արշաւանքը։

«68 թ. ամրան կիսին Լուկուլսու, շարժուելով Տիգրանակերտից, առաջ գնաց անկառկած Տիգրիսի անցքով և գետի արեւմուտք Վանայ լնի ափերով՝ հասաւ Մուշի և Եփրատի սարահարթը։ Դնացքն ընթանում էր դանդաղթշնամու այրուծիու, մանաւանդ հեծեալ աղեղնաւորների անընդհատ ու անտանելի ընդհարումների պատճառով, բայց առանց աչքի ընկնող արգելքի նոքա գրաւեցին գիրքերն ու Եփրատի անցքը, որ քաջարար պաշտպանում էր Հայկական հեծելազօրը։ Երեաց և Հայոց հետեակազօրը, բայց չյաջողուեց ճակատ յօրինել։ Այսպիսով բանակն հասաւ Հայաստանի բուն սարահարթին և առաջ էր քայլում գետի անծանօթ երկիրը։ Նոքա գեռ մի կարգին գժուարութեան չէին պատճեն, բայց արդէն թրշնամի այրուծիու հետ բնդհարման և երկրի գժուար աշցանելութեան պատճառով յառաջնաղացութեան անխուսափելի ուշացումը բանակի համար ինքն ըստ ինքեան զգալի կրուստ էր։ Նախ զան զօրքի Արտաշատ հասնելը վրայ հասաւ ձմեռը և հէնց որ Խառիսյի զինուորները ձիւն ու սառոյց տեսան, կրուեց զինուորական կարգապահնեան թունդ ձգուած լարը։ Զօրքի մէջ իրապէս յայնուած ապստամբութիւնը սափեց զօրապետին նահանջման պատուէր տալ, որ և տեղի ունեցաւ Լուկուլսի սովորական ճարպիկութեամբ։ Յաջողութեամբ հասնելով Միջագեազ, ուր տարուայ եղանակը գեռ թոյլ էր տալիս նորանոր ձեռնարկութիւններ սկսելու, Լուկուլսու անցաւ Տիգրիս գետը և իւր ամրոցը զօրքով յարձակուեց այս կողմերում Հայոց ձեռքին մնացած վեր-

ջին Մծրին քաղաքի վրայի Արքայից արքան, որ արդէն Տիգրանակերտի դէսպերից վարժուել էր, քաղաքին չմօտենաւ։ Չնայած քաղաքի քաջ պաշտպանութեան, պաշտպաներն յարձակմաք առան մի մութ անձրեային դիշեր և լուկուլլսի զօրքն այդտեղ գտաւ ոչ պակաս աւար և յարմարաւոր ձմերանոցներ, ինչ որ գտել էր մի տարի առաջ Տիգրանակերտում։ Սակայն նոյն ժամանակ թշնամու ամբողջ յարձակողական ոյժն ընկաւ Պոնտոսում և Հայաստանում մնացած հոսմէացի վաշտերի վրայի Մի տեղ Տիգրան ստիպում էր հոսմէացի զօրավար Լուցիուս Ֆաննիուսին (որ առաջ Միհրդատի և Հերատորիոսի համար միջնորդ էր եղել) մի ամրութիւն քաշուել ու փակուել։ Մի այլ տեղ Միհրդատ 4000 հայկական և 4000 պոնտական հեծեալներով դուրս էր եկել և որպէս առատիչ ու վրիժառու, կոչ էր անում ժողովրդին երկրի թշնամու դէմ։ Ամենքը միանում էին նրա զօրքերին։ Հոսմէացի ցան ու ցիր եղած բոլոր զինւորներն սպանուեցին և մէջ տեղից վերցուեցին։<sup>1)</sup> Նոյն իսկ Պոնտոսի հին զինւորներն ես հոսմէացոց կողմից Միհրդատի կողմն էին անցնում և կարճ ժամանակում Միհրդատ կրկին իւր կրցրած թափաւորութիւնը ձեռք բերաւ։ Բայց Լուկուլլոս, որ մտածում էր ինչ էլ որ լինի շարունակել պատերազմն Հայոց հետ և յաղթահարել, ստիպուած եղաւ իւր զինւորների դժգոհութեան պատճառով և սենատի նոր որոշման համաձայն (ծերակրյալ յաջորդ տարսւան զօրապետութիւնն յանձնել էր Գլաբրիոնին) դէպի Փոքր Ասիա քաշուել։ Նախ քան այդտեղ համեսլը, հոսմէացիները մի անգամ էլ պարտութիւն են կրում Միհրդատից Զիէլլի (Zielia) մօտ Երբ Լուկուլլոս իւր բանակով Փոքր Ասիա է մտնում, Փոքր Հայքի կողմից, ուր ժողովուած էին Տիգրանի փեսայ Մարտասանի տէր Միհրդատի և Հայոց զիսաւոր ուժերը, և կամենում է այդտեղ ճակատ տալ, զօրքերը չեն համաձայնուում և Լուկուլլոսն այն պահին,

1) Տես III. 74—76.

Երբ մօտ էր արշաւանքն ընդհանուր յաղթական վախճանով պսակելու ժամը, ստիպուած էր տեղի տալ ծերակոյտին և զօրքին և առանց ընդհարուելու թշնամու կենադրանական ուժի հետ, քաշուել Փոքր Ասիայի հէնց այն տեղը, ուր հոսմէացիները կանգնել էին 8 տարի գրանից առաջ ձմրանը, նախ քան հայկական ու Փոքր Ասիական պատերազմների սկսուիլը։

Նոյն ժամանակները Հոսմէացի իր քաջութիւններով ու անձնական արժանիքներով յայտնի մի այլ զօրավար՝ Պոնմէսս այնքան հոչակ էր ստացել, որ ծերակոյտը նրան յանձնեց Արեկելքում գործող զօրաբաժնի հրամանատարութիւնը՝ թէ ցամաքի և թէ ծովերի վրայ միանգամայն նւ Պոնմէսս ոչ միայն արդարացրեց ծերակոյտի որոշումը, այլ և շատ առաջ գնաց իւր գործի հետեանքներով։ Դաշլով Արեկելք, նա եռանդուն կերպով պատրաստուեց Լուկուլլոսի սկսած և կիսատ թողած պատերազմը շարունակել Հայ և Պոնտացի միացեալ ուժերի դէմ։ «Պոնտական պալատում կարծում էին, թէ Պարթեների թագաւոր Հրահատն հիմա համաձայն կը լինի գաշնակիցներին միանալու, ի նկատի ունենալով նոցա տարած յաղթութիւնները։ Դրա հակառակ հոսմէացի գեսազանները գնացին Պարթեաց Տիգրոն (Կաէզիփիօն) պալատը դաշն կապելու, այդ հանգամանքին աւելի նպաստեցին այն շիռ թութիւնները, որ բաժանում էին ձգում Հայոց արքայական տան մէջ։ Արքայից արքայի համանուն Տիգրան որդին հօր դէմ ապստամբել էր, կամ այն պատճառով, որ համբերութիւն չունէր սպասելու ծերունի հօր վախճանին, կամ գուցէ եղբայրներից շատերին սպանող հօր կատկածաւութիւնից աղատուելու համար ապստամբութիւնն էր ընտրել իբրև միակ միջոց։ Հօրից յաղթահարուած, նա մի խումը նշանաւոր հայերի հետ խուսափում է Արշակունիների պալատը և այնտեղ ինտրիգներ է լարում հօր դէմ։ Այդ էր պատճառը մասամբ, որ Հրահատգաշնակիցութեան համար երկու կողմից առաջարկուած պարզեց Միհրդետքը՝ աւելի սիրով հոսմէացոց ձեռա-

քից է համաձայնում՝ ընդունել և կուկուլլոսի հետ Եփսրատի ափերի նկատմամբ արած իւր գաշնագրութիւնը Պոմպէսի հետ այժմ՝ նորսգելով, նոյն իսկ իւր համաձայնութիւնն է տալիս հոռմէացց հետ Հայոց գէմ գործեւու, Սակայն հոռմէացց և պարթեների գաշնագրութիւնից էլ աւելի Տիգրան կրտսերը զնանեց Պոնտոսի և Հայոց թագաւորներին նրանով, որ նրա ապստամբութիւնը գաշնակից արքաների մէջ խոսվութիւն ձգեց: Արքայից արքան գաղտնապէս կասկածում էր, թէ մի զուցէ իւր աները մատ ունենայ իւր թուան ըմբոստութեան մէջ (Արտասեր Տիգրանի մայր Կլէսպատրան Միհրդատի աղջիկն էր) և եթէ այդ հանգամանքը յայտնի բաժանման առիթ չէր էլ տալիս, այնու ամենայնիւ երկու արքաների համերաշխ գաշնակցութիւնը լուծուեց հէնց այն ժամանակ, երբ ամենից շատ կարիք կար գրանք:<sup>4)</sup>

Մինչդեռ միւս կողմից Պոմպէս պարթեների դաշնակցութեամբ զօրացած մօտ 10—50,000 սեփական բանակով մանում է Պոնտոս և Հալածելով Միհրդատին, երկուսով հասնում են Տիգրանի սահմաններին: Փոքր Հայաստանում Միհրդատ մի վերջնական պարտութիւն է կրում Նիկոպոլիսի մօտ և յուսահատուած շտապում է Եփրատի ափերը՝ միտնալու Տիգրանի բանակին: «Սակայն այդ յօյն էլ դատարկ էր» Միհրդատի երեակայական գաշնակցութիւնն այլ հս գոյութիւն չունէր: Պոմպէսոի և Միհրդատի վերեւ յիշած կոխների ժամանակ Պարթեաց թագաւորը ճնշուելով հոռմէացիներից և աւելի շուտ տեղի տալով հայ փախստական թագածաւանգին, յարձակուել էր զօրքով Տիգրանի վրայ և նրան ստիպել էր ամրանալ անմատչելի բարձունքներում: Թշնամի բանակն ոկտեց նոյն իսկ Արտաշատ մայրաքաղաքը պաշարել, բայց որովհետու պաշարումը երկար տևեց, Հրահատը իւր զօրքի մեծ մասով հեռացաւ, որից յետոյ Տիգրանը յետ մնացած պարթեական զօրաբաժինն ու իւր որդու առաջնորդ

գութեամբ գործող հայ գաղթականներին (emigrant) յաղթահարեց և ամբողջ պետութեան մէջ իւր տիրապետութիւնը կրկին հաստատեց: Եատ հասկանալի է, որ այսպիսի հանգամանքներում թագաւորը արամագրուած չէր մինչ նոր ինարոյ յաղթող հոռմէացց հետ ընդհարուելու, աւելի քիչ Միհրդատի համար զոհուելու, որին նա այժմ աւելի քիչ էր գատահանում, քան երբ և իցեւ այն ժամկեց, երբ նրան խմացրել էին, թէ նրա ապստամբ որչ դին մագիր է իւր պապի (Միհրդատի) մօտ զնալու Այսպիսով նա միջոցներ ձեռք առաւ հոռմէացց հետ մասնաւոր հաշտութիւն անելու և սակայն գրա վախճանին շապասելով, իւր յարաբերութիւնները ըոլորովին կըտարեց Միհրդատի հետ: Սա հասնելով հայկական սահմանին, լսեց, որ Տիգրան արքայից արքան նրան բռնելու համար գլխագին է նշանակել 100 տաղանդ (150,000 տալեր) բռնել է նրա գեսպաններին ու հոռմէացց յանձներ: Միհրդատին ուրիշ ճար չէր մնում, բայց եթէ քաշուել հիւսիս, իւր անձը մի կերպ աղատելու: Պոմպէսը մատաւ Արաքսի հովիսար, իւր հաշիւը վերջացնելու Տիգրանի հետ: Համարեա առանց ընդդիմութեան նա հաստ Արտաշատի կողմերը (ոչ հեռու երկանից) և բանակ գրեց քաղաքով գերմանական երեք մզոն հեռաւորութեան վրայ: Այսաեղ գնաց նաև արքայից արքայի որդին, որ յօյն ունէր հօր անկումից յետոյ Հայոց աշխատական թագն ընդդունել հոռմէացց ձեռքից, ուստի և ամեն կերպ արգելքներ էր հանգէս բերում, որ հաշտութիւն չինի հօր և հոռմէացց մէջ: Սակայն Տիգրան վճռեց հաշտութիւն գնել հասմէացիներից, ինչքան էլ որ թանկ լիներ դա-

Զիսկ և առանց ծիրանու, սակայն արքայական ապարազով և զինապատով նա հոռմէացց բանակը գալով, ցանկանում էր զօրուապետին ներկայանալ: Լիկտորի պատուէրի համաձայն (Բնչացէս պահանջում էր հոռմէական զինապատի կարու ու կանոնը) նա իւր ձին ու սուրբ յանձնում է ուրիշներին և ըստ բարբարաների սովորութեան, պրոկրնսուլի սաքն է ընկնում և ի նշան անպայման հպատա-

<sup>4)</sup> III 125.

կութեան՝ նրա ձեռք տալիս իւր առկարօշաւոր թագն ու խոյրը՝ Պոմպէոսը խիստ ուրախացաւ այս հեշտ յաղթութեան վրայ, բարձրացրեց խեղճացած արքայից արքային, զարդարեց կրկն արքայական նշաններով և թելագրեց խաղաղութեան պայմանները: Բացի պատերազմական դանձարանին 9 միլիոն տալեր (6000 տաղանդ) վճարելուց և զինւորներին առատարար պարտեատրելուց, որոնցից խրաքանչխրին ընկաւ 50 գենար (15 տալեր), թագաւորը հրաժարում էր իւր արած բալոր նուաճումներից, ոչ միայն Փինիկիայի, Ասորիքի, Կիլիկիայի, Կապադովիկիա կան գաւառներից, այլ նաև Եփրատի աջ ափում ձգուած Սոֆէնից և Կորդուէնից: Նա նորից սահմանափակուեց բուն Հայաստանով և այդպիսով վերջացաւ նրա մեծ թագաւորութիւնը (Արքայից արքայութիւնը): Մի հատիկ արշաւանքով Պոմպէոս կարողացաւ բարձրովին ընկճել և հպատակեցնել Պոնտոսի և Հայաստանի երկու զօրեղ թագաւորներին: 66 թ. սկզբում ոչ մի հռոմէացի զինուոր չկար այլ ևս հին հռոմէական կալուածքներից այն կողմը: Նոյն տարուայ վերջում Միհրդատը խոյս տուաւ առանց զօրքի Կովկասի կիրճերը և Տիգրան թագաւորը Հայաստանի դահ նոտաւ ոչ այլ ևս որպէս արքայից արքայ, այլ որպէս հռոմէական աւատառու իշխան: Եփրատից արևմուտք Փոքր Ասիական ամբողջ երկիրն անպայման կերպով հռոմէացոց էր պատկանում: Յաղթական բանակը ձմերավայր ընտրեց նոյն գետի արևելեան կողմը Հայոց հողի վրայ վերին Եփրատի և Կուր գետի միջավայրը, որտեղ խոալացիք երբեմն իրանց ձիսներին ջուր էին խացրել առաջին արշաւանքի ժամանակ:

Պոմպէոս յաղթական դուրս եկաւ իւր առաջ դրած մեծ պատերազմից. Արեւելքի և Արեւուտքի ընդհարման արդիւնքն եղաւ մէկի զօրեղացումք, միւսի ընկճումք: Առակայն մի բան խիստ աչքի է ընկնում: Թէ 8 Տիգրան և Միհրդատ իրար հետ գաշն էին կապել օգնելու թէ պա-

տերազմների և թէ այլ վտանգների մէջ, բայց նոքա համարեա ոչ մի գործ իրար հետ չձեռնարկեցին: Ամենանեղ ճգնաժամին նոքա առանձին էին և նոյն իսկ իրար գէմ: Ծրունի Միհրդատը՝ յոյսը կարելով իւր գաշնակցից ու կարցրած համարելով իւր փառքը, քաշուել էր Սև ծովի հիւսիսային կողմերը: Նրանից ապատամում է ամենասիրելի որդին և հաւանական ժառանգը և Միհրդատ թշնամեաց ձեռքը ընկնելու համար Պանիկապէօն ամրոցում վերջ է գնում իւր կեանքին: Այսպէս մեռաւ Միհրդատ 63 թ. 66 տարեկան հասակում 57 տարի կառուցարելուց և 26 տարի հռոմէացոց հետ կուսւելուց յետոյն Հօր մարմինը Փառնակէսն ուղարկեց յաղթողին ի նշան իւր՝ գէպի Պոմպէոսն ունեցած հաւատարմութեան:

Պոմպէոսն այսուհետեւ հպատակեցնելով Ասորիքն ու Խաղաղացնելով Հրէաստանը և ամրող արեւմտեան Ասիան հռոմէական կալուածք գարճներով, սպառնակոն դիրք ըլլունեց պարթեների նկատմամբ. նախ որ Տիգրան Մեծին աւելի նախապատութիւն էր տալիս, քան Տիգրան կրտսերին՝ Պարթեաց Հրահատ թագաւորի գաշնակցին, և առա հրամայում է ուղղակի բանել Տիգրան կրտսերին նրա ընտանիքով և չի բաց թողնում նոյն իսկ այն ժամանակ, երբ Հրահատ միջնորդում է հռոմէացի զօրավարին իւր աղջկայ և փեսայի համար: (Կրտսեր Տիգրանի կինը Պարթեաց թագաւորի աղջկին էր): Պարթեները բորբոքում են, հռոմէացոց վնասելու համար զօրքով Հայաստան են մտնում, սակայն պատերազմը չըսկած ստիպուած են լինում տեղի տալ Պոմպէոսի ամենասաստ զօրութեան առաջ: Պոմպէոս պարթեներից առնելով՝ Մեծ Հայաստանին է միացնում Կորդուէնը և Միհրդատերի հիւսիսային պաղաէտ մասը, այնպէս որ հռոմէացոց և պարթեների սահմանն է լինում առաջուայ նման ոչ Եփրատը, այլ Ասորա - Միհրդատերի անապատը, իսկ Սոֆէնն ու Եփրատի ձախ ափը սկզբնապէս նշանակուած էր Կրտսեր Տիգրանին: Պոմպէոս զանազան կարգադրութիւններ անելով, վերապատճեամ է Հռոմ:



Այսպիսով զերջացաւ արեմտեան Ասիայի նուաճումը և նուաճողներն էին Լուկոլլս և Պոմպէոս քաջ ու տաղանագաւոր զօրավարները, Փառաւոր էր Պոմպէոսի ընդունելութիւնը Հռոմում։ 61 թ. սեպտեմբ., 28 և 29-ին սարբած յաղթական գնացքն անցնում էր Հռոմի փողոցների միշ ջրց, տանելով իւր յետեից՝ բացի անթիւ ու անհամար դանձից Ասիայի երեք մեծ ու կարող թագաւորների՝ Միհրդատի, Տիգրանի և Հրահատի որդոց Հռոմը մեծարում և սրանչանում էր այն մարդով, որ նուաճեց Աֆրիկան ու Սպանիան, յաղթահարեց Ասիան ու ազատեց Հռոմը մոլեւանդ սարակների ձեռքից, որ յաղթեց 22 թագաւորների և Հռոմի անունը զեր ի վերոյ պայծառացրեց ու ահեղ և սոսկալի գարձրեց որևէ քաղաքային այլ ուժի համար։ Հայաստանը Պոմպէոսի գնալով, գարձաւ հռոմէական աւտառու թագաւորութիւն։ Տիգրան այնուհետեւ երկար չապրեց, նա մեռաւ 56 թ., փետրուար ամսին։<sup>1)</sup>

Տիգրանի որդին յիշւում է Արտաւազդ, որ 54-ին արդէն Հայաստանի արքայական գահի վրայ էր։ Նա սկզբում իւր հօր հագտակութիւնն ու դաշնակցութիւնը պահեց, բայց երբ առաջին եռապետութեան անդամ Կրտսոս Արևելք եկաւ պարթիների գէմ կռուելու, Արտաւազդ երեսանց խօսք առւաւ հռոմէացց 10,000 հեծեալով օգնութեան հասնել, բայց իրօք ծածուկ դաշն կապեց Պարթեաց Որոդէս Ա.<sup>2)</sup> թագաւորի հետ և իւր քոյլը նրա Բակուր որդուն կութեան տուաւ Խառանի (Karrhae) մօտ (Եղեսիայից քիչ հարաւ) հռոմէական լեգէնները չարաշար պարտութիւն են կրում պարթիներից և մեծ վեզիրը Կրասոսի գլուխը իւր վեհապետին ընծայ է ուղարկում։ Այնուհետեւ պարթիները Հայոց օգնութեամբ Ասորիք արշաւեցին։ Պարթիների և հռոմէացց այս ընդհարանն արդիւնքն այն եղաւ, որ Հռոմի տիրապետութեան սահմանն էլլի Եփրատն եղաւ 50 թ։)<sup>3)</sup>

1) Տես III 157, 342.

2) Որոդէս Ա. թագաւորել է 54—36, Պարտագաշեան II 89.

3) Տես III 341—352.

Տիգրան Մեծից յետոյ, երբ պարթիներն հետզհետէ զօրանալով արդէն հռոմէացոց գիմաց մի պատկանելի ուժ էին կազմել, Հայաստանը խաղալիք է գտնում այդ երկու մեծ պետութիւնների ձեռքին։ Ըստ բերման հանգամանկների, երբեմն պարթիներն էին զերակշող տեղ բունում և թագաւոր նշանակում Հայաստանում իրանց ուղած մարդուն, շատ անդամ իրանց ցեղից, երբեմն էլ հռոմէացիները յառաջանալով գուրս էին քշում պարթիներներին և հայկական գահի վրայ բազմեցնում իրանց մեել նածուներին։ Իսկ հայերը, որոնց ներքին շարժումներն ու յուզումները մեզ անյալու են, մերթ Հռոմի, մերթ Տիգրանի գահականներին էին թեքում։ Խաղաղ անդո՞ր վիճակ չի ունենաւմ Հայոց աշխարհը և մի քանի գար Պարսկաց ու հռոմէացոց աշքի փուշ մարդով, վերջապէս կորսցնում է իւր թագն ու հարստութիւնը Սասանեանների օրով, որոնք Հայոց Աշխակունի պետութեան վերջ դրին։<sup>1)</sup>

«Այն ժամանակ, երբ հայերը մրցում էին պարթիների հետ և Արաբսի ափերում հաստատուած թագաւուրութիւնն աշխատում էր Առաջաւոր Ասիայում։ մեծ որեատութեան դեր խաղալ, պարթիներն ընդհանրապէս բարեկամաբար էին վերաբերում հռոմէացիներին, ինչպէս իրանց թշնամինների հակառակորդներին։ Բայց Տիգրանին ու Միհրդատին յաղթելուց յետոյ հռոմէացիները Պամպէսի ներմուծած կարգերի չնորհիւ այնպիսի դիրք ըռնեցին, որ դժուար թէ կարելի լիներ երկու պետութիւնների մէջ խաղաղութիւնը տեական լինելու Հռոմէացիները նուածել էին Կապագովիկան ու Մեծ ու Փոքր Հայաստանները, Կովկասն հիւսիսային ցեղերը, Փոքր Մարաստանը կամ Առարապատէնան։ Կովկասեան սարերից և Կասպից ծովի արհմանան ափերից սկսած Հռոմին էր պատկանում։ «Թէ՛ Հելլէն ազգաբնակութիւնը Սև ծովի հարաւային ափերում

1) Հռոմէացց ու պարթիների կոււը Հայաստանում դեռիւսանութիւն ձեռք բերելու համար՝ Մոմպէն մանրապատում կերպով նկարագրել է, թէն միայն արտաքին դէպերը։ Գ. Ա.

և Կապագովկիայում և Կամոգէնում այնպէս հաստատ հիմք էր բռնել, որ կարող էր հռոմէական դերիշխանութեան գէմ դնել, բայց Հայաստանն հռոմէական բազմամեռյ իշխանութեան տակ դարձեալ անհելքն երկիր մեաց, անհիղելի կերպով կապուած Պարթեաց պետութեան հաւատի ու լեզուի ընդհանրութեամբ և ազնուական ընտանիքների բազմաթիւ կապերով, տարազով ու սպառազինութեամբ։ Հռոմէացոց գուգազն ու հարկահանութիւնը Հայաստանում երբէք տեղի չունեցան։ Արդէն այն էլ շատ էր, որ այս երկիրն իւր սեփական բանակի կանոնուորման և նրա, ինչպէս նաև այնտեղ եղած հռոմէացի զինւորների ապրուատի համար կարողանում էր հարկաւոր ծախօը հոգալ։ Հայ վաճառականները միջնորդ էին հանդիսանում ապրանքների փոխանակութեան զանազան երկիրներ՝ Սկիւթիա, Կասպից ծովի վրայով արևելեան Ասիա և Չինաստան։ Տիգրիսն ի վայր Բարիլոն և Հնդկաստան, արևմտեան կողմից նաև Կապագովկիա։ Ըստ երեսյթին շատ բնական կրլինէր բազարական տեսակէտից, որ հռոմէացիները իրանց հպատակ երկրից տուրք և մաքսահարկ առնէին, սուկանն ոսքա չորին այդ երբէք Հայաստանն այն պետութեան մէջ չէր, որի հետ նա կապուած էր ազգութեան կապերով, իսկ այս հանդամանքը նրա համար կարեսր նշանակութիւն ունէր այն կուուի մէջ, որ վարեցին հռոմէացիները իրանց արևելեան հաշեանների հետ կայսրութեան ամբողջ ժամանակի։<sup>1)</sup>

Երբ Հռոմը վտանգի մէջ էր եռապեանների և ազա ազդամիջեան կոխւների ժամանակ, պարթիներն յառաջ են խաղում և մանում Ասորիք ու Փոքր Ասիա։ Սակայն Անտանիոս, որ Արևելքումն էր, ծրագրում է ամբողջ Արևելքը նուածել և արդէն մտքում նա բաժանել էր բոլոր երկիրներն իւր որդոց մէջ։ Հայաստանը մտագիր էր տաւը կէռպատրայից ունեցած իւր Աղեքսանդր որդուն 36 թ., Ք. ա. աղատուելով կէռպատրայի գրկից՝ Անտոնիոս

դորբն առաջ տարաւ դէպի Մայրագոյն Արևելք Հռոմէաց համար ոչ սովորական ճանապարհով՝ Եփրատով ու Տիգրիսով, այլ նա «ուղղուեցաւ դէպի հիւսիս՝ դէպի Հայաստան և այնտեղ հաւաքելով իւր բոլոր ուժերը և բանակիլ զօրեղացնելով հայկական այրութիւն, դարձաւ մարական Ատրոպատէնի (Ատրոպատական) սարահարթի ուղղութեամբ, նրա դաշնակից Հայոց թագաւորը կարող էր առաջարկել նրան սազմական գործողութիւնների այդպիսի ծրագիր, որովհետեւ Հայաստանի թագաւորները շարունակ ձգտում էին այդ հարեան երկիրը նուաճել և Արտաւազդը (Տիգրանի օրդին) կարող էր յստ ունենալ, որ այժմ կը յազդէ իրան համանուն Ատրոպատէնի սատրապին։ Բայց ինքը՝ Անտոնիոսը այդպիսի դիտաւորութիւններով չէր կարող առաջնորդուել։<sup>1)</sup> Գուցէ նա ուզում էր պարթիների վրայ յարձակուել իրանց երկրի բուն կենդրուից, յամենայն դէպս Անտոնիոս խիստ ընդգիւմութեան է հանդիպում Ատրոպատէնում և «Հայոց թագաւորը յաջողութեան ամենաշնչին յայս անգամ կորցնելով, հաւաքում է իւր զօրքերն ու նոցա հետ Հայաստան գառնում»։ Անտոնիոս անսակելի տանշանքների հանդիպելով, ստիպուած էր յետ գառնալու հրաման կարգալ և մինչեւ Հայաստան հասնիլը անփոխարինելի զրկանքներ ու կոռուստներ է ունենում։ Զօրքի կոտորումէ։ Հայաստանում Արտաւազդ նրան ընդունում է, Անտոնիոս սակայն առաջ է զնում մինչև Անտիոք՝ ճանապարհին կորցնելով դարձեալ 8,000 զինուոր։ Այդ անյաջողութեան պատճառը նա համարում էր կապագովկիայի և Հայաստանի թագաւորներին և երբ կեսարի ու Անտոնիոսի մէջ իշխանութիւնը բաժանելու համար անհամաձայնութիւն եղաւ, վերջինս 34 թ., Հայաստան եկաւ, նախապէս գըլխիստել տալով կապագովկիայի Արխարթ թագաւորին։ Անտոնիոսի Հայաստան գալի, ինչպէս ինքն առում էր նրա համար է, որպէս զի բռնէ թագաւորին, որ մերժել էր

Եղիպտոս գնալ։ Արիժառութեան այս գործադութիւնը եղենական կերպով տեղի ունեցաւ խարէութեամբ և ոչ պակաս զազրելի կերպով տօնուեց Աղէքսանդրիայում, ներկայացնելով կապիտոլում տօնուող հանդէսների ծագրանկար նմանօգտութիւնը։ Սուելքին հրամայելու համար նշանակուած Անտոնիոսի որդին այդ ժամանակի Հայաստանի թագաւոր եղաւ և տնուսնացաւ նոր գանձակից Մարտասանի թագաւորի տղջկայ հետև Մինչդեռ գերուած ու քիչ յետոյ Կիչոպատրայի ցանկութեամբ գլխատուած Հայաստանի Արտաւաղդ թագաւորի աւագ որդի Արտաքսիար (Արտաշէս), որին հայերը նրա հօր տեղ թագաւոր էին հռչակել, պախուստ տուաւ պարթեների մօտ։ Այսպիսով թէ Հայաստան և թէ Մարտասան-Արտաքսանան Անտոնիոսի իշխանութեան տակ էին կամ նրա դաշնակիցները։ Պարթեների գէմ պատերամը թէն յայտարարուած էր, բայց յետաձգուեց մինչև որ Անտոնիոս յաղթէ իւր արևմտեան ոսոխին՝ մրցակցին (Կեսարին)։ Հրահատ Դ (36-1) իւր կոմից յարձակում գործեց Մարտասանի վրայ. սկզբում նո յաջողութիւն չունեցաւ, որպէս հետեւ Հայաստանում մնացած հռոմէական զօրքերն օդնում էին մարերին։ Բայց երբ Անտոնիոս պատրաստուելով կուտել Կեսարի հետ, դուրս կոչեց այնտեղից իւր վաշտերը, պարթեները զօրեղացան, յաղթեցին մարերին ու թէ Մարտասանը և թէ Հայաստանը տուին Արտաշէս թագաւորին, որը ի վրէժ հօր գլխատման, հրամայեց բռնել ու պախովիով անել Հայաստանում ցրւած բոլոր հռոմէացիներին։<sup>4)</sup>

Ակցիումի և Աղէքսանդրիայի մօտ տեղի ունեցած Անտոնիոսի անկումից յետոյ Օգոստոս ինչըսն էլ որ չուզենար իւր նախորդի լայն ու գժուար ծրագրերն իրագործել, պէտք է Հայաստանինուաճման գործն անպատճառ գլուխ հանէր, որովհետեւ Հայաստանը Պարթեաց ձեռքն անշած դէպքում, հռոմէացիները կորով էին Արեւելքում իրանց

ձեռք բերած հոչակն ու անունը կորյնել։ Իսկ Հայաստանը ձեռք բերել, նշանակում էր Պարթեաց հետ կոփուսել, որովհետեւ այդ երկիրը Փար թէ քաղաքական և թէ ազգայնական համակրութիւններով աւելի հակառած էր պարթեների քան հռոմէացոց կողմօւ։<sup>1)</sup>

Աւ գոստոս իւր մօտ ապաւինած Ատրոպատէնի թագաւորին տուաւ Փառը Հայրը, իսկ Տրդատին, որ անցածող կերպով փարձել էր Հրահատի իշխանութիւնը խլել և Աւգոստոսին էր գիմել, ուղարկեց Ասորիք, յայս ունենալով այսպիսով, որ հռոմէացոց յայտնի թշնամի Հայոց Արտաշէս թագաւորի առաջը կառնուիւ։

« 20 թ. երբ Աւգոստոսը անձամբ Ասորիք եկաւ և լուրջ ու եռանգուն սկսեց գործել, նրա կամքին հնազանդուել սկսեցին արեւելեան ազգերը։ Հայաստանում Արտաշէս թագաւորի գէմ ելաւ մի զօրեղ կուսացաւթիւն և ապստամբները դիմեցին հռոմէացիներին ինդրելով թագաւոր կարգել Հայոց Աշտաշիսի կրտսեր եղբօր՝ Տիգրանին, որ մնուած էր կայսերական պալատում և այն ժամանակ ասլրում էր Հռոմեում, երբ կայսրի խօրթ որդին՝ Տիրերիոս Կլաւդիոս ներոնը, 22 տարեկան մի երիտասարդ, զօրեղ բանակով Հայաստան մտաւ, Արտաշէս թագաւորն սպանուեց։ Իսկ ազգականների ձեռքով, իսկ Տիգրանը արքայական թագն ընդունեց կայսերական վուխանորդից ձիչու այնպէս, ինչպէս 50 տարի դրանից առաջ նրա Տիգրան պազը իւր թագն ընդունել էր Պարմպէսուի ձեռքից։ Ատրոպատականը նորից անջատուեց Հայաստանից և Մարտաց թագաւոր Աշտաշազդի Արիորարզոն որդուն արուեց, որը նոյնպէս մնուել էր Հռոմեում։ Աական, ինչպէս երեւում է, նո աւտական կախումն ունէր ոչ թէ հռոմէացիներից, այլ պարթեներից։ Ոչինչ յայտնի չէ այն մասին, թէ արդեօք ինչ կարգեր ներմուծուեցին կովկասի մօտակայ թագաւորութիւնների մէջ. բայց որովհետեւ այս թագաւորութիւնները յետագայում հռոմէաց

ցիների աւատական տէրութիւնների կարգին էին դասւում, հարկաւոր է ենթադրել որ այդաեզ ևս հռոմէական ազգեցութիւնն այդ պահին յաղթող էր»<sup>1)</sup>)

Հռոմէացիներն այս ժամանակիներում կարելի է առել աւելի շատ հաշտ էին քան լարուած պարթիների հետ, որովհետեւ նոցա շահերը շատ քիչ էին ընդհարում։ «Ընդհակառակը Հայաստանում հռոմէական գերիշխանութիւնը չունենալով բացի իրանից ուրիշ ոչ մի թեւ ութիւննք, գծուարութեամբ էր կարողանում դիմանալ աղպային ընդդիմադիր կուսակցութեանց Տիգրան թագաւորի վազաժամ՝ մահից յետոյ նրա որդիները, կամ ոոցա անունով կառավարող պետական մարդիկը միացան այդ կուսակցութեանը։ Հռոմէացիների կողմնակիցները դրա հակառակ հանդէս բերին միայլ իշխանի՝ Արտաւազզին, բայց նա չէր կարող յաղթահարել աւելի ուժեղ հակառակ կոռամը։ Հայկական այս ներքին խասնակութիւնները խոչընդուածացան պարթեա-հռոմէական բարեկամական յարաբերութիւններին։ Հայերը, որոնք ընդհանրապէս հաւկանին չէին զգում գէպի հռոմէացիները, բնականօրէն աշխատում էին յենուել պարթիներին, իսկ Արշակունիները նոյնպէս չէին կարող մոռանալ, որ Հայաստանը երբեմն պարթեական թագաւորող տան կողմնակի մի ճիւղի իշխանութիւն էր։ Առանց արիւնի եղած պատերազմները յաճախ ապարդիւն և վտանգաւոր են լինում։ Բանն այն տեղ հասաւ, որ 6 թ. Ք. ա. այն Տիգրերիսը, որ 14 տարի դրանից առաջ Տիգրանին Հայաստանի աւատական գահն էր բազմեցրել, Հռոմի պատուերով զօրքի գլուխն անցած պիտի նորից Հայաստան մտնէր և կարգ վերահստատէր, հարկ եղած գէպքում նոյն իսկ ուժի դիմէր։ Բայց կայսերական տան մէջ բարձրացած երկարաւակութիւններն այսուեզ ևս իրանց կործանիչ ազգեցութիւնն ունեցան։ Տիգրերիս հրաժարուեց իւր խարթ հօր յանձնարարութիւնից, իսկ որովհետեւ նրան փոխարինող ուրիշ կայսերա-

1) Տես V 372—73.

կան զօրապետ չկար, ուստի հռոմէական կառավարութիւնը մի քանի տարի շարունակ կամայ ակամայ անձայն նայում էր պարթեների հովանաւորութեամբ Հայաստանում ինքնազգութիւնուող հակահռոմէական կուսակցութեան վրայ Վերջապէս 1 թ. Ք. ա. նոյնպիսի յանձնարարութիւն ոչ միայն տրուեց կայսեր որդեգիր քսան տարեկան Գայոս Կեսարին, այլ և Հայաստանի նուաճումը, ինչպէս յոյս ունէր հայրը, պէտք է լինէր մեծամեծ ձեռնարկութիւնների սկիզբն և քսանամեայ թագաժառանգ իշխանի արևելեան այս արշաւանքը պէտք է լինէր նոյն իսկ Աղեքսանդր Մակեդոնացու գործի շարունակութիւնը.... Հայաստանի նկատմամբ այս ձեռնարկութիւնն այնքան յաջող գուրս չեւկաւ, որքան և Տիգրերիսինը Հռոմի թագաժառանգն ու Պարթեաց թագաւոր Հրահատը տեսակցութեան ելան Եփրատի կղզիներից մէկում, պարթեները նորից հրաժարուեցին Հայաստանից և Պարթեաց հետ լինելիք պատերազմի վտանգը վերացաւ և խանգարուած բարելաւ յարաբերութիւնները գոնէ արտաքուստ վերսկուեցին։ Գայոս Հայոց թագաւոր դրաւ Մարաց թագաւորական տնից Արփորարշան իշխանին և Հռոմի գերիշխանութիւնը նորից հաստատուեց։ Սակայն Հռոմի նկատմամբ լաւ չորամագրուած հայերը առանց ընդդիմագրութեան համաձայնուեցին այսպիսի կարգագրութեան Բանը ոչ միայն լեզէսնները Հայաստան քաշելու, այլ և ընդհարման հասաւ։ 2 թ. Ք. յ. Հայոց Արտագերա (Artageira) բերդի պարիսպների տակ մի պարթե սպայ խորամանկ միջոցով վիրաւորեց երիտասարդ գահաժառանգին, որը ամսից աւելի վէրքից տանջուելով մեռաւ Պետաւթեան և գինառատիական քաղաքականութիւնների ի մի խառնուիլն այս անգամ ևս մնասակար հետեանիքներ առաջ բերաւ։ Երիտասարդ իշխանի մահը փոխեց քաղաքականութեան ընդհանուր ընթացքը։ Յետաձգուեցին շատ ծրագրեր։ «Մրագրի ամենաանհրաժեշտ մասը միայն կատարուած էր, Հայաստանը գրաւուած էր հռոմէական դորքերով և պարթեների հետ վերանորոգուած էին հին բարեկամական յա-

բարերութիւնները, թէև այս յաջողութեան վրայ էլ մռայլ սոռւեր էր ձգում գահաժառանդ իշխանի մահը»:

Այդ յաջողութիւնը նոյնքան անհաստատ էր, որքան անհետեանք էր 20 թ. փառաւոր արշաւանքի յաջողութիւնը: Հոսմի նշանակած Հայաստանի թագաւորները շուտով անճար գրութեան մէջ ընկան, ճնշուեցին հակառակ կողմի կուսակցութեան թագաւորներից պարթեների ծածուկ կամ յայտնի աջակցութեամբ: Երբ Հռոմում սոռւած պարթեների Վոնոն (Vonones) թագաժառանդը հրաւիրուեց թափուր մնացած պարթեական գահը բազմելու, հռոմէացիներն յստ ունէին յանձին նորա հզօր նեցուկ գտնել: Սակայն հէնց այդ պատճառով Վոնոնն ստիպուած եղաւ գահից հրաժարուել, իսկ նրա տեղը բռնեց Մարտաստանցի Արտաւանը (Artabanos), որ մօր կողմից Արշակունիներից էր, բայց պատկանում էր պարթեական Դակերի ցեղին և երեխայութիւնից արդէն տեղական բարքերին սովոր և եռանդուն մարդ էր (10 թ. Ք. յ.): Այդ ժամանակ հայերն համաձայնուեցին Վոնոնին իրանց թագաւոր ընդունել և այդ պատճառով Հայաստանն ենթարկուեց հռոմէական ազգեցաւթեան: Սակայն Արտաւանը չէր կարսդ թոյլ տալ, որ նրա քշուած սոսիսը իւր դրացի երկրում թագաւորէր: Որպ զի պաշտպանէ իւր կոշման ամեն կողմից անարժան իշխանին, հռոմէական կառավարութիւնը պիտի կուուէր թէ պարթեների և թէ իւր սեփական հպատակների հետ: Այն ժամանակներում ծայրագոյն իշխանութեան հասնելով, Տիրերիս իսկցին զէնքի շիմեց, և Հայաստանում մի առ ժամանակ հակառական կուսակցութիւնը գերիշող եղաւ: Սակայն Տիրերիս երբէք մտագիր չէր հրաժարուել այս սահմանակից կարևոր երկրից»:

Կապագովկիայի ու կոմմագէնէյի թագաւորութիւնները վերջացնելով, Հռոմի կառավարութիւնը Գերմանիկ գահաժանդին լիազօրութեամբ արևելք է ուղարկում գործերը կարկագրելու: Նա գալիս է Հայաստան և «միայն իւր բարձր գիրքով հայերին կրկին հպատակեցնում է: Անըն-

գունակ Վոնոնին նա հեռացնումէ և հռոմէացիներին հաւատարիմ մնացած տեղական աղնուականութեան ցանակութեամբ նոցա թագաւոր է նշանակում այն Պոլիմոնի որդուն, որին Անտոնիոսը Պոնտոսի թագաւոր էր կարգել, այսինքն Զենոնին, կամ Արտաշէսին, որպէս կոչում էին նրան հայերը: Հայոց այս նոր թագաւորը մի կողմից ազգակցութիւն ունէր կայսերական տան հետ իւր մայր թագուհի Պիթագորի՝ և ուաղետ Անտոնիոսի թոռի կողմից: Միւս կողմից նա մեծացել էր տեղական սովորութիւններով, ճարպիկ որսորդ էր և խնճոյքների ժամանակ լաւ խմոզ Մեծ թագաւոր Արտաւանն էլ հռոմէացի գահաժառանդի հետ խոհեմութեամբ բարեկամաբար էր վարւում: միայն խնդրում է հեռացնել Ասորիքից իւր նախորդին՝ Վոնոնին, որպէս զի վերացուին այն յարաբերութիւնները, որ սկսուել էին նորա և գժգոհ պարթեների մէջ: «Տիրերիս կայսրը քանի հաստատ կերպով պահում էր պետութեան զեկը իւր ձեռքում և քանի կենդանի էր Հայոց Արտաշէս թագաւորը, արեւելքում խաղաղութիւն էր տիրում: բայց զառամետալ կայսրի վիրջին տարիները, այն ժամանակ, երբ նա իւր մենաւոր կզզու վրայ ապրելով պետական գործերը իրանց ընական ընթացքին էր թողել և չէր ուզում ոչ մի քանի խառնուել, մանաւանդ Արտաշէս թագաւորի մահունից յետոյ (մօտ 34 թ.) ամեն բան նորից հին կարգով առաջ գնաց: Արտաւան արքան, հպարտանալով իւր երկարատե ու բախտաւոր թագաւորութեամբ և իրանի սահմաններում ապրող ցեղերի գէմ բազմիցս տարած յաղթութիւններով և միենոյն ժամանակ վստահ լինելով որ զառամեալ կայսրը չի կամենայ պատերազմ ոկաել Արևելքում, համոզեց հայերին թագաւոր հաչակել իւր աւագ որդի Արշակին՝ այսինքն հռոմէական գերիշխանութիւնը փոխել պարթեականից: Արտաւան գ. այնքան առաջ գնաց, որ նոյն իսկ սկսեց պահանջներ անել հռոմայեցիներից և աշխատեց Կապագովկիան գրաւել: Բայց Տիրերիս քնած չէր: Նա վիտուլիս զորավարին արհելք է ուզարկում: «Պարթե Արշակին, որին հայերը թագաւոր էին ընտրել,

նա հակագրեց վրաց թագաւորական տան պատկանող մի իշխան, Վրաց թագաւոր Թարամանի եղբայր Միհրդատին և համոզեց թէ նրան և թէ ալբանների թագաւորին զէնքը ձեռին պաշտպանել հռոմէական թիկնածուին հայկական գահի վրայ: Կովկասի այն կողմն ապրող պատերազմաէր և ամեն մի զօրահաւաքի առաջարկները սիրով ընդունող ցեղերի միջից սարմատացիներն էին, որ վարձուելով հռոմէական ոսկով, բազմաթիւ խմբերով հաւաքուեցին Հայաստան խուժելու: Հռոմէացիների իշեկնածուն իւր կողմից կարողացաւ կաշառուած պալատականների օգնութեամբ թունաւորել իւր մրցակցին և տիրել ամբողջ երկրին, նրա մայրաքաղաք Արտաշատի հետ միասին: Արտաւան Հայաստան ուղարկեց սպանուած թագաւորի փոխանորդ իւր միւս որդուն Որոդէսին (Orodes), իւր կողմից նոյնպէս աշխատելով Կովկասեան օժանդակիչ զօրքեր ձեռք ձգել: բայց շատ քիչ վարձկաններ միայն կարողացան Հայաստան գալ իսկ պարմէական այրուձին չէր կարող դադիւն Կովկասեան ցեղերի դիմացկուն հետեակազօրին և սարմատացի ահաւոր հեծեալ աղեղնաւորներին: Որոդէսը դաշտում տեղի ունեցած տաք կուռում յաղթուեց և իւր մրցակցի հետ մենամարտելիս ծանր վէրք ստացաւ: Այն ժամանակ Արտաւան ինքը Հայաստան եկաւ:<sup>1)</sup>

Բայց Վիտտելոս Ասորիքից զօրքերը քաշելով Միջադեռք, երկպառակութիւն է ձգում պարթեական տան մէջ, այնպէս որ Արտաւան գահավիժուելով և կրկին թագաւոր ճանաչուելով ստիպուած է լինում վերջը խաղաղութեան գահն կապել հռոմէացիների հետ և ընդունել նրանց թեկնածու: Միհրդատին Հայոց թագաւոր Այդ ժամանակ, հեշտութեամբ ձեռք բերած այս խաղաղութիւնից յետոյ շուտով մեռնում է Տիրերիոս 37 թ: և նրա յաջորդ Գայոս Կալիգուլան՝ մի նախանձոտ, անմիտու անընդունակ մարդ, յետ է կոչում թէ Վիտտելոսին և թէ Հայոց թագաւորին: Ինքն ըստ ինքեան հասկանալի է

որ այդպիսի բարեյաջող հանգամանքից կօգտուէր Պար թեաց թագաւորը ու նորից կընուածէր Հայաստանը<sup>1)</sup>: Գայոս Կալիգուլային յաջորդեց Կաւոդիոս 41 թ: Սա սկսեց Տիրերիոս կայսրի ծրագրերն առաջ տանել Արևելքի նկատմամբ: Աքսորանքից ազատեց Միհրդատին և կրկին Հայաստան ուղարկեց թագաւորելու: Պարթեների երկրում Վարդան և Գոտարզ եղբայրների մէջ ազգամիջեան կոիւ կար գահի համար, որ նոցա զբաղեցնում էր, ուստի Միհրդատ իւր եղբօր ուղարկած զօրքերով կարողանում է յաղթել պարթեներին հաւատարիմ մնացած հայերին և նորից նուաճում է երկիրը<sup>2)</sup>:

«Բանի որ պարթեների երկրում իշխում էր թոյլ Գոտարզը, Հայաստանը մնում էր հռոմէացիների տիրապետութեան ներքոյ: Բայց հէնց որ կառավարութեան զեկն անցաւ աւելի խոհեմ ձեռք և ներքին երկպառակութիւնները դադարեցին, Հայաստանի պատճառով կոխները նորից սկսուեցին: Գոտարզի յահից և նրա յաջորդ Վոնոն Բ-ի կարճատե թագաւորութիւնից յետոյ գահ բարձրացաւ վերջինիս Վաղարշ (Vologasos-Վալադաղ) որդին, իւր երկու

1) Հայաստանին տիրելու համար չկան պատմական ճշգրիտ տեղեկութիւններ. բայց որ այդ իրօք տեղի է ունեցել, յայտնի է պարզապէս Տակիտոսի ժամանակադրութիւնից 11.9: Հաւանօքէն այս երողութեան է վերաբերում Յովսեփոսի (20.3.3) պատմածը Արտաւանի յաջորդի մատղը թեան մասին, որ նա ուղում էր հռոմէացիների հետ պատերազմ սկսել, որից եղուր աշխատում է յետ կառեցնել Աղեարէնի սատրապ Խատուէսը: Յովսեփոսը (գուցէ Արանից առնելով նաև Գարագաշեանը, Գ. Ա.) իհարկէ սխալմամբ Արտաւան Գ. ի յաջորդին Վարդան է կոչում: Արտաւանի անմիջական յաջորդը Տակիտոսի (Քրոնիկոն 11.8) լինում է նրա համանուն որդին, որին յետոյ Գոտարզը գահի հեռացրեց նրա որդու հետ միասին: այսուեղ պէտք է հասկանալ այդ Արտաւան Ե-ին: V 379.

2) Պետրոս Պատրիկ խառնում է Վ. ըաց և Բառփորում իշխող թագաւորների գործերը համանունութեան պատճառով: գրահամար պէտք է առաջնորդուել այս կէտում Տակիտոսով (ժամանակադրութիւն 12.18.):

Եղբայրների՝ Տրդատի և Բակուրի անպայման համաձայն թեամբ, մի բան, որ հազուագիւտ էր այս տէրութեան մէջ, Դա մի ընդունակ և խելօք կառավարիչ էր, նա շատ քաղաքներ էր շինել տալիս և շինելով ստորին Եփրատի ափերում՝ Վաղարշակերտ (Vologasia) քաղաքը, յաջողութեամբ աշխատում էր Պալմիրայի վաճառականութիւնն այդտեղ տեղափոխիլ, նա չէր սիրում ծայրայեղ հապճեպով ձեռք առած միջոցներ և աշխատում էր ըստ կարելոյն խաղաղ ապրել իւր հզօր հարեւանի հետ, Սակայն հայաստանի յետնուածումը նրա հայրենի տան քաղաքական գլխաւոր նպատակն էր, ուստի և նա էլ պատրաստ էր օգտուել ամեն մի յարմար առթից իւր նպատակին հասնելու համար Այդ ժամանակ, ինչպէս երևում է, այդպիսի մի առիթ կար, Հայոց պալտառում տեղի էր ունենում պատմութեան մէջ հազուագիւտ ընտանեկան քըսումնելի ողբերգութիւններից մէկը, Վրաց զառամեալ թագաւոր Թառասմանը մտածեց իւր եղբօրը (Միհրդատին) Հայոց թագաւորական դահից ձգել և նրա տեղը իւր հարազատ օրդի Հռագամիսալին (Rhadamistos) նշանակել իւր հօր հետ կոռուած լինելու պատրուակով. Հռագամիստեկաւ իւր հօրեղօր և աներոջ մօտ և սկսեց բանակցութիւնների՝ մէջ մտնել նշանաւոր հայերի հետ վերոյիշեալ նպատակով: Երբ նա կողմնակիցներ հաւաքեց, Թառասման 52 թ. պատերազմ սկսեց զանազան պատճառներով իւր եղբօր հետ և ամրող երկիրն ենթարկեց իւր կամ աւելի ճիշդ իւր որդու իշխանութեան: Միհրդատ դիմեց Գոռնի<sup>1)</sup> բերդում եղած հոռմէացի բերդապահ զօրքին: Հռագամիստ չհամարձակուեց այս ամրութեան վրայ գալ, բայց բերդակալ Յուլիս Պոլիսնը ստոր և կաշառակեր մարդու անուն էր վայելում: Հարիւրապետը, որ նրա մօտ բերդա-

1) Գոռնի (Gorneae), որին հայերը Գառնի անունն են տալիս, մինչև այժմ՝ յայտնի է իւր աւերակներով, Երեանից ոչ շատ հեռու դէպի արևելք. կիբեր. Դա յայտնի Բաշ-Դառնի աւանն է. Գ. Ա.:

պետի պաշտօն էր վարում, զնաց մառամանի մօտ այն նպատակով, որ նրան համոզի հեռանեալ՝ յետ նահանջել: Նա խոստացաւ, բայց խոստամբ չկատարեց: Պոլիսնը իւր օգնական բերդապետի բացակայութեան ժամանակ սկսեց սպառնալ թագաւորին, (որ արդէն գուշակում էր իւր վիճակը), որ եթէ նա ինքն անձնատուր չինի Հռագամիստին, բայսաի ձեռքին խաղալիք կիթողնուիւ: Հռագամիստ կեանքից զրկեց թագաւորին, նրա ամուսնուն՝ Հռագամիստի քրոջ և նրա որդուց, որովհետեւ սորա իրանց ծնողների դիմակները տեսնելիս սուդ ու կոծ էին բարձրացրել: Այս ճանապարհով հասաւ Հռագամիստ Հայաստանի ափրապետական թեան: Հոռմէական կառավարութիւնն հարկու չէր կարող անտարեր նայել այն գաժան և անսիրտ գործերի վրայ, որ կատարում էին հոռմէացի սպաների գործականութեամբ և չէր կարող թոյլ տալ, որ իւր աւատական իշխաններից մէկը պատերազմ՝ յայտնէր միւսին: Այսուամենայնիւ Կապմագովիկայի կուսակալ Յուլիս Պելինդնուոր Հռագամիստին հայոց նոր թագաւոր ճանաչեց և Ասորիքի կուսակալ Ումմիդիս Կվագրատի մօտ գումարուած ժողովում՝ այն կարծիքն յաղթազ հանգիստացաւ, թէ միենոյն է հոռմէացիների համար թէ ով կիշխէ Հայաստանում, եղբօր որդին թէ հօրեղբայրը: Մի լեգիսնով Հայաստան ուղարկուած Լեգատին պատուիրուեց պահպաննել իրերի առաջնուայ դրութիւնը (status quo) ցնոր կարդագրութիւն: Այն ժամանակ պարթեաց թագաւորը ենթադրելով, որ Հռոմը շատ էլ եռանդուն կերպով չի պաշտպանի Հռագամիստին, այդ վարկեանը յարմա հաւաքեց Հայաստանի նկատմամբ իր վաղեմի իրաւունքներն յայտնելու: Հայաստանը նա նույիրեց իւր Տրդատ եղբօր և Հայաստան մանող պարթեական զօրքերն համարեա առանց կոռու տիրեցին անքողջ երկիրին և նրա 2 մայրաքաղաքներին՝ Տիգրանակերատին և Արտաշատին: Երբ Հռագամիստ փորձեց իւր ձեռք պահէլ այն, ինչ որ չարագործութեամբ ձեռք էր բերել, հայերն իրանք գուրս քշեցին նրան: Հռոմէական երկրապահ զօրքը, ինչպէս երևում է, Գառնիի անձնատուր

լինելուց յետոյ հեռացաւ Հայաստանից, իսկ Ասորիքից դուրս և կող Լեզիսին կուսակալը հրամայեց վերադառնալ՝ պարթեների հետ ընդհարումն ունենալուց խոյս ատալու համար։

Այդ եղաւ 54 թ։ Հոռոմ այս նոր թեկնածուի գէմ ուղարկեց Դոմետիս Կորբուլոն զօրավարին 54 թ։ որ հռոմէական գերիշխանութիւնը Հայաստանում պէտք է տարածէր, Վաղարշ իւր զօրքը յետ էր կոչել Հայաստանից պարտում վերսկսած երկառակութիւնների համար Կորսուլոն երկար բանակցութիւններից ու լրջմիտ շրջահայեցողութիւնից յետոյ նոր լեզիսնով թարմացած 30,000 հոգով 58 թ. Եփրատն անցնում է ու մտնում Հայաստան։ Զօրքը Հայոց հողի վրայ է ձմերում։ «59 թ. գարնանը Կորբուլոն սկսում է յարձակողական արշաւանքն Արտաշատի ուղղութեամբ։ Հենց նոյն ժամանակ հիւսիսից ներս են խուժում նուել վրացիները, որոնց թագաւոր Թառասամանը իւր սեփական չարագործութիւնը ծածկել ցանկանալով հրամայում է գլխատել իւր Հուադամիստ որդուն և աշխատում է իւր պատրաստակամութեամբ մոռացնել տալ առաջուայ յանցանքը։ Հայաստան խուժեցին նաև հարաւարկամտեան հարեւան մօսիները և հարաւից Կոմմոգէնի Անտիոքոս թագաւորը։ Վաղարշ արքան ստիպուած էր հերկանների ապսուամբութիւնը ճնշելու համար իւր պետութեան հարաւային սահմաններում մնալ և չէր կարողանում և կամ չէր կամենում անմիջական կերպով մասնակցել կոռուին։ Տրդատ քաջաբար գիմագրեց, բայց նա ոչինչ չէր կարող անել թշնամի ուժերի ահագին գերազանցութեան առաջն նա ի զուր էր աշխատում հասնել հռոմէացիների հաղորդակցութեան գծին, որով պաշար էին ստանում նորա Աև ծովի վրայով Տրապիզոնից։ Հայկական բերդերն առնուեցին և բերդապահ զօրքերը կոտորուեցին մինչև վերջին մարդը։ Արտաշատի պատերի տակ մի կռուի մէջ ջարդուելով՝ Տրդատ ընդհատեց անհաւասար կռիւը և փախաւ պարթեների մօտ Արտաշատն անձնատուր եղաւ և այնտեղ՝ Հայաստանի բուն սրտում

հռոմէական բանակն անց կացրեց ձմեռը 60 թ. դարանը Կորբուլոն ամբողջ քաղաքը հրի ճարակ դարձնելով դուրս ելաւ այդտեղից և երկրի մէջտեղով անցաւ միւս մայրաքաղաքին՝ Տիգրանակերտին, որ դանուում էր Տիգրիսի հովտում՝ Մծբինից հիւսիս Զօրապետից առաջ արդէն ընթանում էր այն ահն ու սարսափը, որ ձգել էր երկրում Կորբուլոնը՝ այրելով Արտաշատը։ Նա ոչ մի տեղ լուրջ ընդդիմութեան չպատահեց։ Տիգրանակերտը կամաւորապէս բաց արաւ իւր գռներն յաղթողի առաջ, որն այս անգամ խելացի հաշիւներով ողորմածաբար վարս եց քաղաքի հետ։ Տրդատ մի անգամ էլ փորձեց վերագաւնալ և շարունակել կռիւը, բայց առանց գժուարութեան հեռացուեց։ 60 թ. վերջում ամբողջ Հայաստանը հռոմի հպատակ էր։

«Հասկանալի է, որ Հռոմում այլ ևս ուշք չէին դարձնում Տրդատի վրայ։ Տիգրան գահիշխանը, որ իւր հօր կողմից Հերովդէս Մեծի թոռան որդին էր, մօր կողմից Կապագովիկայի Արքեղայոս թագաւորի թոռան թոռը, կնոջ կողմից Մարինեան թագաւորական տան ազգական և Աւգոստոսի ժամանակը Հայաստանում իշխող վազանցուկ թագաւորներից մէկին ցեղակից, — այժմ ներսն կայսրից Հայոց թագաւորութիւնն ստացաւ և Կորբուլոնի աջակցութեամբ գահ բարձրացաւ 60 թ։ Նա կրթուել էր Հռոմում և ընդհանրապէս հռոմէական կառավարութեան գործիք էր։ Հայաստանում մնաց հռոմէական երկրապահ զօրքը, որ բազկանում էր 1000 զինուորից 3—4 հարիւր հեծեալներից և հետեւակներից, որոնք պատկանում էին օժանդակիչ զօրքերին։ Հայաստանի սահմանային երկիրների մի մասը բաժանուեց բուն երկրից և տրուեց Հայաստանի հարեւան թագաւորներին՝ Պոնտոսի և Տրապիզոնի թագաւոր Պոլեմոնին, Փոքր Հայքի թագաւոր Արիստոբուլին, Վասաց Ֆառաւամանին և Կոմմոգէնի Անտիոքոսին։ Հայոց նոր թագաւորն իւր կողմից, ի հարկէ հռոմէացիների օդնութեամբ մտաւ սահմանակից պարթեական Աղիարէնի նահանգը, յաղթեց տեղական կուսակալ Մոնու

բազին և այնպէս էր ցոյց տալիս, իբր թէ միաք ունի  
պարթեներից այդ մասն էլ խլելու»:

«Պործերի այս ընթացքն ստիպեց պարթեներին դուրս  
գալ կրաւորական գրութիւնից: Խոսքն այժմ՝ ոչ թէ Հաւ-  
յաստանը նորից ձեռք ձգելու, այլ պարթեական պետու-  
թեան ամբողջութեան մասին էր երկու մեծ պետու-  
թիւնների մէջ վաղուց ի վեր պատրաստող պատերազմն  
անխուսափելի էր թւում: Պարթեական մեծամեծների  
ժողովում՝ Վաղարշ նորից նշանակում է Տրդատին Հայոց  
թագաւոր, նրա հետ միտահն ուղարկում է և զօրապետ  
Մօնեսին (Monaeses) հռոմէացի ուղարկապատորի հետ կը-  
ուելու: Պարթեները պաշարում են դրան Տիգրանակեր-  
տում, որ գրաւել էին հռոմէացի զօրքերը: Վաղարշ ինքը  
պատերազմական գլխաւոր ուժերն հաւաքել սկսեց Ասա-  
րեքի դիմաց՝ Միջադեռքում և սպառնալ սկսեց Ասորի-  
քին (61 թ. սկզբին): Կորբուլոնը, որ Կվադրատի մահից  
յետոյ միաժամանակ հրամանատար էր թէ Կապադովիկիա-  
յի և թէ Ասորիքի զօրքերին, և խնդրել էր կառավարու-  
թեան՝ Կապադովիկիայում և Հայաստանում առանձին կու-  
սակալ նշանակել, — առժամանակ երկու լեզիոն է ուղարկում  
Հայաստան Տիգր անին օգնելու, իսկ ինքը շարժում է  
դէպի Եփրատ Պարթեաց թագաւորին դիմաւորելու: Սա-  
կայն այս անդամ՝ ևս գործը ոչ թէ կռւով, այլ գաշնչ-  
քով վերջացաւ: Վաղարշ լաւ գիտենալով իր սկսած դոր-  
ծի վտանգալից լինելը, ցանկութիւն յայտնեց ընդունել  
այն պայմանները, որ ապարդիւն կերպով առաջարկուած  
էին հռոմէացիների կողմից հայկական պատերազմից ա-  
ռաջ և համաձայնուեց, որ իւր եղբայրն Հայաստանն ստա-  
նայ որպէս Հռոմի աւատառու: Արբուլոնն ընդունեց այդ-  
առաջարկը. նա գագարեց Տիգրանին պաշտպանելուց,  
հռոմէական զօրքերը դուրս հանեց Հայաստանից և թոյլ  
տուաւ Տրդատին վերահաստատուել կրկին իւր տեղում,  
մինչդեռ պարթեական օժանդակիչ զօրքերն ևս հեռացան-  
այնտեղից: Ի պատասխան այդ բանի Վաղարշ պատգամա-  
ւորութիւն ուղարկեց Հռոմ՝ և յայտնեց, որ իւր եղբայրը

պատրաստ է Հայաստանն ընդունել հռոմէական կառա-  
վարութիւնից, որպէս աւատական կալուածք»:<sup>1)</sup>

Սակայն Հռոմ անբաւական մնաց գործերի այդպիսի  
ելքից և Լուցիոս Յեզենիսոս Պետին յանձնեց Հայաստանի  
նուաճման գործը: Պետ անմիջապէս գործն սկսում է,  
Մելիտենէի (Մալաթիա) մօտով անցնում է Եփրատն ու  
մտնելով Հայաստան, ձեռք է ձգում սահմանային մօտիկ  
բերդերը: Սակայն տարածամ եղանակների որատնասով  
նա ստիպուած էր գտղարեցնել պատերազմական դոր-  
ծողութիւնները և հրաժարուել ենթագրաբար նոյն տա-  
րրում գրաւուելիք Տիգրանակերացից: Բայց որպէս զի կա-  
րելի լինէր հետեւեալ գարնան իսկոյն առաջ շարժուել,  
Կորբուլոնի պէս սա ևս թշնամու երկրում ձմերոցի բնա-  
կարաններ գրաւեց Ռանդէա քաղաքի մօտ, որ գտնեւումէ  
Արածանու կամ Մուրադ չայի ճիւղերից մէկի վրայ, ոչ  
հեռու այժմուայ Խարբերդից (Charput): Իսկ բանակի ազիսը  
կանանց ու երեխաններին տեղաւորեց այդտեղից ոչ հեռու  
անսաւիկ Առսամասատ բերդի մէջ:<sup>2)</sup>

Վաղարշ օգտուում է յարմար առթից և իւր զօրքերը  
կրկին Հայաստան տանելով, պաշարում է Ռանդէա քա-  
ղաքը և նախ քան Կորբուլոնի Ասորիքից Պետին օգնու-  
թիւն հասցնելը, ստիպում է արան անձնատուր լինել  
և նախատուր լինելու պայմաններն հետեւալներն են.  
հռոմէացիները պէտքէ Հայաստանից հեռանային, գրաւած  
բոլոր բերդերը վերադարձնէին և իրանց ձեռքում եղած  
ամբողջ պաշարը պարթեններին յանձնէին, որին մեծ կա-  
րիք ունէին սոքաւ: Վաղարշ իւր կողմից յայտնեց, որ  
չնայած այս պատերազմական յաջողութեան, նա պատ-  
րաստ է դիմել կայսերական կառավարութեան ինդրելու,  
որ իւր եղբայրը նշանակուի Հայոց թագաւոր որպէս հռո-  
մէական աւատառու իշխան և համաձայն է այդ նպատա-

1) Տես V 386—388.

2) Տես V 389.

կրկ պատգամաւոր ուղարկել Հռոմ Ներսնի մօտ»<sup>1)</sup>  
վազարշ ուղում էր այսպիսով գործը կրկին խաղա-  
ղութեամբ վերջացնել՝ հաստատ դիտենալով, որ հռո-  
մէացիների համար այդպիսի պարտութիւնները աւելի  
պատերազմական եռանդ են բորբոքում, քան ուժերը  
ջատում։ Հռոմէացիները պատերազմ են հրատարակում  
և կորբուլոնին Արևելքում լիազօր հրամանատար կարգելով,  
յանձնարարում են նրան Հայաստանի նուաճման գործը  
զէնքով գլուխ հանել։

«63 թ. գարնանը Կորբուլոնը, համաձայն իրան տուած  
հրամաններին, սկսեց յարձակողական շարժումն և իւր  
չորս լեզիոններն անցկացրեց Մելիտինէի մօտ Եփրատից  
Հայ-պարթեական պատերազմական գլխաւոր ուժերի գի-  
մաց, որ հաւաքուած էին Առուամսսատում։ Բայց ուզմական  
գործողութիւնները կարեոր հետեանքներ չունեցան. առ-  
նուեցին միայն հակահռոմէական հայ աղնուականներին  
պատկանող մի քանի բերգեր։ Բնդհակառակը, նոյն իսկ  
այս արշաւանքն ևս դաշինքով վերջացաւ։ Կորբուլոնն ըն-  
դունեց նախապէս իւր պետութեան մերժած պարթեների  
կողմից արուած առաջարկները միայն այն պայմանով,  
(ինչպէս երեաց գործի ապագայ ընթացքից), որ Հայաս-  
տանը միշտ պատկանի պարթեական տան կողմնակի ճիւ-  
զերից մէկին, իսկ հռոմէական կառավարութիւնը առ-  
նուազն՝ դատելով ըստ այդ համաձայնութեան ընդհանուր  
ընաւորութեան, համաձայն էր այսուհետեւ Հայաստանի  
թագն յանձնել ուրիշ ոչ ոքի, բայց միմիայն Արշակունի-  
ներից մէկին։ Դրա վրայ աւելացրին նաև այն, որ Ռան-  
դէայում, հէնց այնտեղ, որտեղ հռոմէացիներն անձնա-  
տուր եղան պարթեներին, Տրդատը հրապարակաւ պէտքէ  
գլխից ցած առնէ արքայական թագը երկու կողմի զօր-  
քերի առաջ և դնէ կայսեր պատկերի մօտ, խոստանալով  
ծածկել միայն այն ժամանակ, երբ կընդունուի կայսրից

և անպատճառ Հռոմում։ Այս բոլորը կատարուեց 63»<sup>2)</sup>)  
«Խաղաղութեան պայմաններն հաստատուեցին և իւ-  
րագործուեցին։ Պարթե գահիշւան Տրդատն իւր խոստ-  
ման համաձայն 66 թ. Հռոմ մտաւ 3000 պարթեական  
հեծեալների ուղեկցութեամբ և իրեւ պատանդ իւր հետ  
տարաւ իւր երեք եղբայրների և Ադիարենի թագաւոր Մո-  
նոբաղի որդիներին։ Նա ծունկ չոգած խոնարհուեց իւր վե-  
հապետի առաջ, որ նստած էր մայրաքաղաքի հրապարա-  
կում գրած կայսերական գահի վրայ և կայսրը խուռն  
ժողովրդի առջև նրա գլմին թագ գրաւ և կապեց ար-  
քայական ժապաւէնը»<sup>2)</sup> Եռւտով երեան եկան օդապակար  
հետեանքներն այն բանի, որ ձեական կերպով տասը տա-  
րի տեսող այս պատերազմը երկու կողմից ևս զալուած  
և նոյն իսկ՝ կարելի է ասել՝ իւաղաղութեամբ էր առաջ  
տարւում և այն բանի, որ այդ պատերազմն իրականա-  
պէս վերջացաւ Հայաստանի Պարթեաց կողմն անցնելով,  
պահելով միենայն ժամանակ աւելի զօրեղ արեւմտեան տէ-  
րութեան նկատմամբ հարկաւոր յարգանըց Հայաստանն  
աւելի շատ կախումն ունէր հռոմէացիներից նոցա ճանա-  
չած աղգային հարստութեան իշխանութեան տակ, քան  
այն թագաւորների իշխանութեան ժամանակ, որոնք արր-  
ւում էին հայերին, առանց նոցա կամքին։ Հռոմէացի  
երկրապահ զօրքը մնաց առ նուազն Սոֆէնի երկրում, որ  
անմիջական կերպով բաժանուում էր Եփրատով։ Արտա-

1) Տե՛ս 391—92.

2) Այս հասորի մի այլ ժառում Մոմզէն խօսելով Պարթե  
Արշակունիների կրօնի մասին՝ առում է, որ քրմեթը մի տեսակ  
խօրհղատու մարմին էին թագաւորների համար։ յետոյ աւե-  
լացնում է։ «Հայոց թագաւոր Տրդատը (իսութը վերոյիշեաւ  
Տրդատի մասին է), որ ծագմամբ Արշակունի էր, Հռոմ եկաւ մո-  
գերի ուղեկցութեամբ։ նոցա ցուցումներով թագաւորն արշա-  
ւում էր, նոցա ցուցումներով ճաշում նոյն իսկ ներսնի հետ  
որը ոիբով լսում էր ապագակի իմաստունների վարդապետու-  
թիւնները և ներկայ էր լինում այն ժամանակ, երբ մոգելն  
արտաքսում էին չար ողիներին»։ V 348.

շատը վերացինելու համար խնդրուեց և ստացուեց կայսեր թոյլատութիւնը, իսկ շինութիւններ կառուցանելու դորձում՝ ներոն կայսրն աջակցում էր թէ փողով և թէ դործավարներ ուղարկելով։ Երկու զօրեղ պետութիւնների մէջ, որոնք Եփրատով էին բաժանւում, ոչ մի ժամանակ գեռ այնպիսի բարեկամական յարաբերութիւններ չէին հաստատուել, ինչպէս Ռանդէայում տեղի ունեցած դաշնադրութիւնից յետոյ, ապա ներոնի կառավարութեան վերջին տարիները, դրանից էլ յետոյ Ֆլաւիանների տնից երեք կայսրների իշխանութեան օրով։<sup>1)</sup>

Ներոն միտք ուներ մի մեծ արշաւանք դործել Արեւելք, յատկապէս կովկասեան ցեղերին յաղթելու համար, մանաւանդ ալաններին, որոնք ապրում էին Կովկասից հիւսիս և այդ ժամանակները խմբերով արշաւեցին Հայաստան, բայց իւր ծրագիրը ի կատար չածած 68 թ. սպանեւում է։ Այսուհետեւ հոռմէացիներն ու պարթեները շարունակում են խաղաղ ապրել, թէև առաջինները զինուրական ուժերն աւելացնում են Եփրատի կողմերում և վրաց Հառմողիկա (Harmonika Թիֆլիզից քիչ հա. արմ.) բերքում զօրք են պահում, սակայն խաղաղութիւնը չի խանգարուում գրանով, մանաւանդ որ փաճառականութեան շնորհիւ Արեւելքն ու Արեւմուտքը կենդանի յարաբերութեան մէջ էին։ Հենց նոյն ժամանակ շինուում է նաև Տիգրանից ոչ շատ հեռու Եփրատի ստորին հովտում Վաղարշակերտ քաղաքը։ Սակայն շուտով այս յարաբերութիւնը փոխուում է։ Վաղարշի յաջորդ Բակուր Ա. 90—108 թ. գործեալ հանգիստ է մնում, իսկ որա եղբայր Խոսրովի ժամանակ իրերի ընթացքը փոխուում է։ Խաղաղութեան խանգարումը գարձեալ Հայաստանի պատճառով էր։ Մի քանի կայսրներից յետոյ գահ է բարձրանում Տրայանոս կայսրը (98—117) և Հայկական թափուր մնացած գահի վրայ տռաջարկում է Բակուրի որդի Աշխադարին (Aridares). բայց Խոսրով արքան Աշխադարին

1) V 392—893.

անընդունակ էր համարում թագաւորելու համար և իւր ինքնագլուխ կամքով նշանակում է Բակուրի միւս որդուն՝ Պարթումազիրիսին։<sup>1)</sup> Ի պատասխան այս վարմունքի Տրայանոս պատերազմ էր յայտարարում և 114 թ. նա մեծ բանակով Արևելք է արշուում և ողովհետեւ պարթեական պալատում կրկին երկպատկութիւններ կային, Տրայանոս անարգել պուած է շարժում։ Փոքր Հայաստանով մտնում է նա Հայաստան և գիմում է Արտաշատ, երբ նա հասնում է ճանապարհի վրայ գանուած Էլեզիս բերդը, նրա մօտ է գալիս Պարթումազիրիսը և իր գլխից հանում է թագն այն յուսով, թէ այդ համեստութեան համար կը հաստատուի իւր իշխանութեան մէջ, ինչպէս երբեմն Տրդատը։ Բայց Տրայանոսը վճռել էր դադարեցնել այդ աւտատական տերութեան կեանքը և Հայաստանը հռոմէական նահանգ դարձնել և ընդհանրապէս կայսրութեան արեւելեան սահմաններն առաջ տանել Այդ մասին նա յայտնեց պարթեական գահիշանին ամբողջ բանակի առջեւ և հրամայեց նրան իւր չքախմբով իսկոյն հեռանալ բանակից ու գուրս ելնել հռոմէական հողից։ Ազմուկ և իրարանցում ընկաւ, որի ընթացքում և մեռաւ Պարթու

1) Ար Աշխադարը կամ Էքսիդարը (Exidares) հակուրի որդին էր Պարթումազիրիսից առաջ Հայոց թագաւոր էր և գահ հազուրէ է եղել Խոսրովի միջոցով—պարզ է Դիօնիս հատուածական պատճութիւնից 63—17 նոյնն են ցոյց տամիս և Արքանի երկու հաստիկուրները 16 (Müller), որոնցից առաջինն ըստ ամենայնի հաւանականութեան այն ճառին է վերաբերում, որով Աշխադարի շահերին պաշտպան ունեէ մէկը գիմեց Տրայանոսին։ Ահնարդից ծե ըու պրշտւ յշտ։ Արևոնաց ո՞ւ մու ծուշ և նուշ և ամրաշոյ այս խոսքերին հետեւում էր Պարթումազիրիսի մասին եղած գանգատը, իսկ յետոյ պատասխանը (անկասկած կայսեր), որ նրա և ոչ Աշխադարը գործն է Պարթումազիրիսի գործերը քննել, որովհետեւ նա որ քանզեց գաշնազըսութիւնը, որի համար և տուժեց։ Թէ ինչ բանի համար է մեղագրում կայսրը Աշխադարին, պարզ չէ։ բայց Դիօնիս մէջ էլ կայ, որ Խոսրովն ասել է, թէ Աշխադարը գուրս չէ գալիս ոչ հռոմէացիներին և ոչ պարթեաներին։ V 388.

մաղիրիսը՝ Հայաստանն հպատակուեց իւր վիճակին և  
դարձաւ հռոմէական կուսակալութիւննա<sup>1)</sup>)

Տրայանոս կայսրն յաղթական կերպով առաջ է գնում  
և Հայաստանի վիճակին են ենթարկում հետզհետէ ած-  
բողջ Միջադեպը, Ադիարենէն, նա հասնում է նոյն իսկ  
Պարթեաց մայրաքաղաքին և աւար է վերցնում արքայա-  
կան սուկեծոյլ գահն ու թագաւորի աղջիկը։ Բայց վերա-  
դառնալիս իմանում է, որ ապստամբել են վերին Միջա-  
գետքն ու Բարիլոնը<sup>2)</sup> Ճանապարհին նեղում է թշնա-  
միներից և տեղ չհասած մեռնում է 117 թ։ Ադրիանոսի  
117—138 և Անտոնիոս Պիոսի 138—161 կառավարութեան  
ժամանակները փոխում է Տրայանոսի քաղաքական աշ-  
խարհակալական միտումները և պետութիւնը կրկին հաշտ  
աշըով է նայում պարթեներին «Հայաստանը դադա-  
րում է հռոմէական նահանգ լինելուց և առաջուայ նման  
Հռոմի հպատակ աւատական պետութիւն է լինում պար-  
թեական թագաւորական տան կողմակի մի ճիւղի կա-

1) 397—399.

2) Անհաւանական չէ, որ այդ միջոցին ապստամբէր նաեւ  
Հայաստանը. բայց եօթ Գուշշիսր Հայաստանի նոյն ժամանա-  
կուոյ թագաւորներ է համարում Միջդատին և Սանատուկին,  
որոնք ապստամբել էին Տրայանոսից և որոնք ըստ Մալալի Խօս-  
քերին՝ Տրայանոսի արշաւանքի ժամանակ թագաւոր էին Պա-  
րսկաստանում՝ նա այս ճանապարհով սխալ գետովութիւնների  
մէջ է ընկնում, խառնելով առանձին անհատների և ազգերի  
անուններ և գործերի, իրազութիւնների պատճառական կա-  
պակցութիւնը քանդելով։ Սակայն Մալալի աւանդախառն պատ-  
մութեան մէջ, ի հարկէ պատահում են և մի քանի պատմական  
իրողութիւններ, ինչպէս օրինակ Պարթամապատիի պարթենե-  
րին թագաւոր զրուիլը Տրայանոսի միջոցով (գա Հայաստանի  
թագաւոր Խոսրովի որդին է, որ Պարթամասպատ է կոչւում)։  
Կարելի է նոյնպէս ճիշտ են Տրայանոսի Հռոմից դուրս գալը  
հոկտ. 114 թ. Սելեկիս հասնելը գեկտեմբ. և Անտիոք մտնելը  
115 թ. յունուարին։ Սակայն այս տեղեկութիւնները, ինչպէս  
որ կան, պատմաբանը կարող է միայն աշբաթող անել և ոչ  
ուղել։

ռավարութեան ներքոյ<sup>1)</sup> Հռոմէական բերդապահ զօրքեր  
կային նաև Հայաստանում՝ Արտաշատից ոչ հեռու Վա-  
զարշապատի մօտու<sup>2)</sup>)

Ուրեմն իրերի դրութիւնը դարձեալ հին կերպարանքն  
է ընդունում. սակայն երկար չի տեսում այդպէս «Status  
quo-ի խանդարողները լինումեն պարթեները» Հայաստա-

1) Ադրիանոս երբէք չէր կարող Հռոմից ունեցած Հայա-  
տանի աւատական կախումը վերացնել. Նրա կենսագլուխ նկատո-  
ղութիւնը—Armaniis regem habere permisit, cum sub Traiano leg-  
atum habuissent (20 դէ) հակառակն է ցաց տալիս. բացի դրա-  
նից Ադրիանոսի կայութեան վերջին ժամանակները Կապա-  
գովիկայի կուտակալի զօրքի մէջ գտնում ենք հայ զօրաբաժին  
(contingent). Պիոս ոչ միայն թոյլ չառւաւ պարթեներին Հայաս-  
տան մտնել իւր խորհութեան վերջին (Vita 9), այլ երօք Հայաստանը  
զարձրեց վասար՝ աւատական իշխանութիւն (140—144 թ. վո-  
ղերը Eckhel 7. երես 15). Պիոսի ժամանակ Վարսատանն աւա-  
տական կախման մէջ էր գտնում Հռոմից, որովհետեւ հակա-  
ռակ գէպեռում պարթեները չէին կարողանայ Հռոմ դիմել Վրաց  
թագաւորից գանգատուելու համար (Dion 69, 15; ) Իսկ այսուե-  
զեց Հարկաւոր է եղբակացնել, որ Հայաստանն ևս գտնուում էր  
Հռոմից նոյնպիսի աւատական կախման մէջ։ Ահա այդ ժամա-  
նակ Հայաստանում իշխող թագաւորների անուններն ան-  
յայտ են մեզ։ Նթէ այն proximae gentes, որոնց իշխանութիւնը  
Ադրիանոսը որպէս վարձատարութիւն յանձնեց Տրայանոսի մէջ-  
ջոցով պարթեական գահ բարձրացրուած Պարթե իշխանին,  
(Vita 5.) իսկապէս հայեր էին, որ սակայն անհաւանական չէ,  
այն ժամանակ այդ կարող է որպէս նոր ապացոյց ծառայել  
թէ Հայաստանի Հռոմից հաստատ կախման և թէ այն բանի,  
որ Հայաստանում երկար ժամանակ իշխել են Արշակունիները։  
Նոյն իսկ Անդրիոս քառօրօն թաշւեն մշշակուած Արքանէ, որ Հռոմում  
իւր մեռած եղբօր Աւրելիոս Միքրթատին մահարձան է կանդ-  
նեցնում, պատկանում է, նայելով նրա անուան, Արշակունիաց  
տոհն իսկ։ Սակայն գժուար թէ գա նա լինէր, որին Վարդար 17  
Հայոց արքայական գահը բազմեցրեց և որին հռոմէականները գա-  
հեց զրկեցին։ Նթէ այս վերջինը որպէս գերի Հռոմ բերուած  
լինէ, գա մեղ յայտնի կը լիսէր և նա գժուար թէ իրան մի մա-  
հարձանի վրայ Մեծն Հայաստանի արքայ անուանէր։

2) 403.

նի վրայ հռոմէացիների ունեցած գերիշխանութիւնն ու նէր նոյն այն ձեր, ինչ որ գերմանական կայսրութեան գերիշխանութիւնը Խտալիայի վրայ Դա թէև անբովանք դակ էր, սակայն միշտ բռնազրօսիկ մի յափշտակութիւն էր համարում և իւր մէջ իսկ արդէն պարունակում էր պատերազմի սկզբնապատճառները։ Ըսդհարման վտանգ կար գեռ Ադրիանոսի ժամանակ. կայսրը կարողացաւ խաղաղութիւն պահել շնորհիւ Պարթեաց աշխայի հետ ունեցած աեսակցութեան։ Անտոնիոս Պիոսի ժամանակ, ըստ երեսիթին դարձեալ պարթենները Հայաստան մտնելու վրայ էին. նրա եռանգուն ջանքերն սկզբում յաջողութիւն էին ունենում—Հայաստանն ազատել նոցա արշաւանքներից։ Բայց նոյն իսկ բոլոր կայսրների մէջ համարեա ամենախաղաղասէր ոյս կայսրն անգամ, որի համար աւելի հաճելի էր մի հպատակի կեանքը պահպանել քան հազար թշնամու սպանել, ստիպուած էր իւր թագաւորութեան վերջին տարինները պատրաստել պաշտպանութեան և զօրեղացնել արհելեան բանակները։ Հաշզիւ էր նա աչքերը փակել (161 թ.), որ վաղուց սպառնացող փոթորիկը բրդաւ։ Վաղարշ ԱՌ աշխայի հրամանով Պարսից զօրապետ Խոսրովը Հայաստան է մտնում և հայկական գահ է բարձրացնում Աշշակունիներից Բակուր իշխաններ կապտղովիայի Սեւերեան կուսական արտա այն, ինչ որ իւր պարտքն էր՝ հռոմէական զօրքերն անցկացրեց Եփրատ գետը։ Էլէքիայի մօմ այսինքն հէնց այն տեղ, ուր դարձեալ Պարթեաց ջանքերով Հայոց գահ բարձրացած Պարթոմազիրիս թագաւորը ի զուր էր խոնարհուել Տրայանոս կայսրի առաջ նախորդ սերնդի օրով, երկու բանակներն իւրաք առան։ Հռոմէացիների բանակը ոչ միայն կոտորուեց, այլ և եռօրեայ կուուի ընթացքում բռնորովին ոչնչացաւ։ Դժբախտ հրամանատարը, ինչպէս երաքեմն Վարոսը, ինքն իր կեանքին վերջ գրաւ։ Արևելեան արքայի յաղթական օրքերը չբաւականացան Հայաստանի գրաւումով. նորա անցան Եփրատն ու մտան Ասորիք։<sup>1)</sup>

1) 405—406.

Սակայն 162 թ. երկու կայսրներից մէկը լուցիս Վերոնը Արևելք է գալիս և պարթեները թուլանում են։ «Հայաստանը շատ շուտով կոլին նուաճում է» 163 թ. Կապադովիայի կուսակալ Ստատիոս Պրիոկ առնում է Արտաշատ մայրաքաղաքն ու աւերում։ Դրանից ոչ հեռու հռոմէացիները շինում են և զօրեղ բերդապահ զօրքով ամրացնում մի նոր մայրաքաղաք Կայսովոլիս-Հայերէն նոր քաղաք, Վաղարշապատ (Էջմիածին)<sup>1)</sup> անունով։ Հետեւեալ տարին Մեծն Հայաստանի թագաւոր է նշանակում Բարեւրի փոխարքն Սոհեմը (Sohemos), ծագումով կրկին Արշակունի, բայց միենայն ժամանակ հռոմէացիներին հպատակ և հռոմէական ծերակոյտի անդամ։<sup>2)</sup> Այսպիսով

1) Հաւանօրէն Գիոնին պատկանող մի հատուկտորի մէջ պատմում ու մ է, որ Պրիոկ հիմնարկեց Հայաստանում Կայոն ողակ և այնաւել հռոմէական բերդապահ զօրք գրաւ, իսկ նրա յաջորդ Մարկոս Վերոս ճնշեց այնտեղ բռնկուած ազգային ապրուամբութիւնը և այդ քաղաքն Հայաստանի դիմաւոր քաղաք յայտարարեց։ Դա Վաղարշապատն էր Օնալարօսոքան կամ Օնալարօսուտուր ըստ Ադամթանգեղոսի), որ այդ ժամանակակից Հայաստանի մայրաքաղաք զարձաւ։ Կիպրոսն ինձ հազարդեց, որ Կայնէպոլիս խօսքերն արդէն Նահելանդը (Stilting) բացատքել է, որպէս թարգմանութիւն հայերէն նոր քաղաք անուանը։ Վ գաւրու հայ հեղինակների մէջ այս սովորական անուան հետ միասին գործածելի է նուև Վաղարշապատ Երկորդ անունը։ Մայսէս Խորենացին ասում է Բարգեծանի Խոսքից առնելով, որ այս քաղաքն յառաջ եկաւ բրդական այն գաղթականութիւնից, որ հաստատաւել էր այնտեղ Տիգրան Զարբարն Զարբարդի ժամանակ, որ հաստատաւել էր այնտեղ Տիգրան Զարբարդի ժամանակ, որ թագաւորել է ըստ նորա 150—188 թ։ Այս քաղաքը պարուղով պատելը և նրա անունը Մայսէս Խորենացին վերագրում է 188 208 թուականին։ Որ այս քաղաքում 185 թուականին Հռոմէական զօրեղ բերդապահ զօրք կար, յայնի է արձանագրութիւնից C. I.L. III 6052.

2) Այս Սոհեմն Աքեմենիկ էր և Արշակունի (կամ իրան այգական էր ցոյց առանից) և թագաւորի որդի էր և թագաւոր, ինչպէս և Մեծն Հայաստանի թագաւոր լինելուց առաջ Համբեկուու և Ֆերակոյտի անդամ—այդ ասում է նորա ժամանակակից Տամելեհոս (10 դ. Ք. Փոտիս (Photios) քաղածի մէջ)։ Կարստ ամենայն հաւանականութեան պատկանումէր Հեմեզ (Hemesa)

իրաւական տեսակէտից Հայաստանի քաղաքական դրութեան մէջ ոչ մի փոփոխութիւն յառաջ չեկաւ, բայց նրան Հռոմի հետ կապող շղթաներն աւելի պինդ ձգուեցին։<sup>1)</sup> «Աևերոս կայսրը (193—211) երբ գահակալութեան կոիւները վերջացրեց ու Աշենլը եկաւ, երկար պատերազմներց յետոյ Միջագետքի փոխարէն Հայաստանի մի մասը պարթեներին տուաւ 198 և 199 թ. արշաւանքների հետանքն այն է լինում, որ «Միջագետքը նոր ընդարձակ ուղղմական նահանգ կազմելու պատճառով Հայաստանի արդէն չէր բռնում առաջուայ պէս երկու մեծ պետութիւնների միջանկեալ մասը, այդ երկիրը կարելի էր թողնել տռաջուայ կարգերով և կայսրութեան ամբողջութեան մէջ չմոցնել։ Հայաստանին թոյլատրուած էր ունենալ ուժիւական զօրք, որի պահպանութեան համար հռոմէացիների կուսակալութիւնը նոյն իսկ յետագյում բաց էր թողնում պետական դանձարանից օժանդակիչ գումարները<sup>2)</sup>։

Եշխողներին (Յովոնիոս 20, 8, 4 և այլ տեղեր): Եթէ Iamblichos քարելնացին գրել է նրա թագաւորութեան ժամանակ՝ ապա այդ խօսքերը կարելի է հասկանալ միան այն մտքով, թէ նա եւր ոօմանը գրել է Արտաշատում։ Որ Սոհեմը թագաւորել է Հայաստանում Բակուրից առաջ, ոչ մը տեղ չե առուած և ճիշտ չէ, որովհեաւ ոչ Ֆրոնտոնի Խոռոչեցը (Naber 127 եր). ոչ էլ Դիոնի հատուածի մեջ ասածները չեն ցոյց տալիս Երկրորդ անդամ գաճ բարձրանալը, իսկ rex Armeniis datus անունով փուղերը երբէք այդպիսի բան ենթագրել չեն տալիս։ Յայտնի չէ, թէ ոլ էր Բակուրի նախորդը՝ պարզ չէ նոյնպէս, թէ արդիօք գաճը թափուը էր թէ որևէ մէկը կար նրա վրայ այն ժամանակ, երբ նա թագաւոր կոչուեց այդ երկը վրայ։

1) 407.

2) Երբ Հռոմի և Հայաստանի մէջ վերանորոգուեցին նախկին յարաբերութիւնները 218 թ. խաղաղութեան ժամանակ, Հայաստանի թագաւորը արտայայտեց այն յոյնը, թէ կը լիքը կը սուսուի հռոմէացիներին ամեն տարուայ տաւած գողերը (Դիօն 8, 27. τοῦ Τιριδάτου τὸ ἀργόριον ὃ κατ ἔτος παρὰ τῶν Τρωμαῖων εὑρίσκετο ἐλπίσαντος λήψεοθα): Զի կարելի ենթագրել, որ Սևերոսի ժամանակ և նրանից առաջ հռոմէացիներին հայերը հարել էին տալիս։

Սևերոսի որդին և յաջորդը՝ Անտոնինը թէև իւր հօր քաջութիւնն ու ռազմական հօտառութիւնը չունէր, բայց ցանկացաւ շարունակել նրա քաղաքականութիւնը Առևելքի նկատմամբ։ Կայսրութեան միացան Օսրոէնան ու Հայաստանը, երբ այս երկիրների աւանդական իշխողները կայսերական պալատ կաչուեցին և այնտեղ գերուեցին։ Բայց այդ իրողութեան լուրը լոկ բաւական էր Հայաստանում ապստամբութիւն առաջ բերելու։ Աշշականի Տրդատը թագաւոր հաշակուեց և պարթեներից աջակցութիւն խնդրեց։ Այն ժամանակ Անտոնինը (Կարակալա) պատերազմական մեծամեծ ուժերի գլուխն անցած 216 թ. Արենք է գալիս՝ որպէս զի հայերին նուաճէ, իսկ եթէ հարկ լինի՝ նաև պարթեներին։ Տրդատն իւր գործը կուրած էր համարում, թէպէտ և Հայաստան ուղարկած հռոմէական վաշտը զօրեղ ընդհարման հանդիպեց։ Տրդատ փախուստ տուաւ պարթեների մօտ Հռոմէացիները պահանջնեցին փախուստականին իրանց յանձնել. պարթեները տրամադիր չէին նրա պատճառով պատերազմ բանալ, մանաւանդ որ հէնց այդ ժամանակ գահակալական վէճեր կային Վազարը V-ի որդոց՝ Վազարը VI-ի և Արտաւանի մէջ։ Նոցանից առաջինը հպատակուեց հռոմէացիների կրկնակի հրամայողական պահանջնին և Տրդատին նոցաձեռքը յանձնեց<sup>1)</sup>։

Անտոնինի յաջորդ Մարկիանոսի ժամանակ հաշտութիւն եղաւ հռոմէացիների և պարթեների մէջ 218 թ. որով

այդ եր լինէր ըոլորովին անհամապատասխան այն բանին, ինչ ոք ասում է Դիօնը։ Գործն այնպէս կարգազրուեց, ինչպէս առացինք վերեւում։ IV և V դարերում, երբ Կոմիտասն սուըերում գանւող Դարիալի կը ճի մուտքը պաշտպանող Բիրիպտռախ (Biriparach) բերդի պէտքերի համար պարսիկները, որ 364 թ. խաղաղութեան գանւագրից յետոյ այնտեղի տէրեւն էին, չոռմեց գրամուլ գումար էին սահնում, իսկ գա համարուել է հարկահատուցումն (Lydis de mag 3, 52, 53, Priscus fr. 31. Mll.):

1) V 418.

Հայաստանը մնում էր Տրդատին, որ սակայն իւր տէրութիւնն ստացաւ հռոմէացիներից որպէս աւատառու իշխան<sup>1)</sup>:

Այդ ժամանակները Պարսկաստանում տեղի է ունեանում քաղաքական մի մեծ իրողութիւն, օտարամուտ պարթիւների տեղ պետութեան գլուխն են ելում Սասանեան արքաները, որոնք Կիւրոսի և Բանքակոսի սերունդ էին համարում իրանց Արտաշիր՝ սպանելով իւր հակառակորդ վերջն Պարթի Արտաւան Վ թագաւորին, գահ է բարձրանում և զօրեղ բանակ կազմելով, հռոմէացիների դէմ է գուրս գալիս, նախապէս յարձակուելով Մարտաւանի և Հայաստանի վրայ, ուր ապաստանի էին Արտաւան Վ-ի որդիները՝ Նրան պատասխանում է Աղեքսանդր Սեներոս կայսրը մի մեծ բանակ կազմելով և Ացեւելով գալով. հռոմէացիները զիսաւոր ուժը կենդրանացնում են Միջագետքում, մի բանակ էլ Հայաստան են ուղարկում. Սակայն Մաքսիմոնոս Թրակացու ժամանակ (255—258) Միջագետքն Արտաշիրի իշխանութեան տակ է մտնում և պարսիկները կոկին պատրաստում են Եփրատն անցնելը. Պատերազմը շարունակում է Գորդիանոս Գ. կայսրի օրով, երբ հռոմէացիները և Սասանեան Շապուհ (241—272) թագաւորը դաշն են կապում, որով Հայաստանն ու Միջագետքը պարսիկներին է մնում և Երկու պետութիւնների սահմանը կը կին Եփրատ գետն է լինում. Սակայն Շապուհ շուտով փոխում է իւր քաղաքականութիւնը և իրան Արեաց և Անարեաց արքայ անուանելով, դուրս է գալիս աշխարհակալութեան, 252 կամ 253 թ. նա գրաւում է Հայաստանը. այդ երկիրն ինքը կամաւոր կերպով ենթարկում է նրան, անկասկած նոյնպէս դրաւուելով նախնական պարսից կրօնի և պարսկական կենցաղի վերանորոգումով. Օրինաւոր Տրդատ թագաւորը հռոմէացիների մօտ ապաստան է փնտուում, իսկ ժագաւորով տան

միւս անդամները պարսիկների դրօշակի տակ են մտնում<sup>1)</sup>:

Շապուհ 260 թ. գերում է Վելպասիանոս կայսրին և շուտով ամրող Արևելքի մէջ հռոմէացիների տեղ անցնում են պարսիկները, որոնք ստիպում էին կռուել նաև Պալմիրայի դէմ. Պալմիրայի Օգենատոս իշխանը, որ մի տեսակ կայսրի փոխանորդի դեր էր կատարում Արևելքում, յաջողութեամբ խրում է պարսիկներից Մծրինն ու Խառանը 264 թ. «Հաւանօրէն և Հայաստանը նորից հռոմէացիներին ենթարկուեց այդ ժամանակ»<sup>2)</sup>:

Երբ Արէլիանոս կայսրն առաւ ու քանդեց Պալմիրայի ժամանակաւորապէս ծաղկած առեւտրական քաղաքը՝ կարելի է տեղ թագաւորութիւնը 273 թ. նա այլ ևս շարունակեց պարսիկների հետ ունեցած պատերազմը, ոչ էլ նրա յաջորդ Պրոբոս կայսրը Բայց սրա յաջորդ Արիւմիս կարոս 282 թ. Հայաստան մտաւ և այնտեղ վերականգնեց առաջուայ կարգերը Սահմանում նրան պատահեցան պարսից գեսպանները և յայանեցին, որ իրանք պարսիկները պատրաստ են զիջանել ամեն մի արդար ու անհջի առաջ<sup>3)</sup>. Սակայն կարոս չի լսում և առաջ գնալով

1) 430. Էռտ Յունական աղթեւը (Զանորա 12, 21) Տրդատ թագաւորը փախաւստ է տալիս հռոմէացիների մօտ, իսկ նրա որդիները պարսիկների կողմն են անցնում: Խոհ քստ Հայոց պատմաւածքի, Խորով թագաւորն սպանուում է իւր եղբայրներից և նրա որդի Տրդատը փախուստ է տալիս հռոմէացիների մօտ (Gutschmid, Zeitschrift der deutschen morgenl. Gesch.) Թերես պէտք է նախապատութիւն տալ այս վերջին պատմուածքին:

2) 434. Այդ յայտնի է այն ժամանակուայ գործերի գրութիւնից, ոսկայն պրա համար զական ապացուցներ չկան: Այն ժամանակուայ կայսրների կենսագրութեան մէջ հայերն ընդհանրապէս առնմից անկատ սահմանակից ազգերի թւութն են կանգնում: (Valer 6. Trig Tigr. 30, 7, 18 Aurel 11, 27, 41) Սակայն այդ աեղեկութիւնները կազմում են լոկ արտաքին մասը և արժանի չեն վստահութեան:

3) Ընդհանրապէս մեզ ոչինչ նոր բան չեն յայտնում Հայաստանի մտուն այն կառկածնելի աեղեկութիւնները, թէ հայերը Վալերիանոսի գերումից յետոյ պարսիկների կողմն են անցնում:

պաշարում և առնելով է պարսկական շատ քաղաքներ, նրա և նրա յաջորդի ժամանակ Հայաստանն ու Միջազգետքը հռոմէացիներին են մնում. Սակայն հռոմէացոց ու պարսից կալուածքների և տիրապետութիւնների, կարելի է ասել, տեսական ու աշխարհակալ Տրայանոսի գծած եղանակով սահմանները Դիոկղետիանոս կայուեր և Պարսից ներսեն՝ թագուորի ժամանակ են որոշում:

Երբ Գալերիսո Մաքսիմոս՝ առաջին անդամ Արեերք գալով՝ անյաջող կերպով է գործն առաջ տանում և յաղթուում է, նրան օգնութեան է գալիս ինքը կայորը միացեալ ուժերով. վճռական յաղթութիւն են տանում ներս սեհի վրայ, աւար առնելով նրա հարեմն ու արքայական դանձերը, ներսեհ արքան հաշտութիւն է առաջարկում, համաձայնութեալ հռոմէացիների կողմից արած բոլոր պահանջները կատարելու։ Հռոմէական անմիջական իշխանութեան սահմանը ճանաչում է Տիգրիս գետը, հարաւային ամբողջ Հայաստանն ու Վանայ ծովը (Թոսպիտիս) մինչև Եփրատ, այսինքն վերին Տիգրիսի ամբողջ հովիտը հռոմէացիներին պէտք է պատկանէր։ Միջագետքին կից այս երկիրները նահանգ չդարձան, այլ հռոմէական Սորէնի ստրափութեան պէս առաջուայ նման կառավարուեցին։ Մի քանի տասնեակ տարի յետոյ այնտեղ մի ամուր բերդ և շինուեց Ամիդ (Դիարբեքիր) անունով, որ այնուհետեւ վերին Տիգրիսի հովառում հռոմէական դլխաւոր կենդրոն դարձաւ։ Միաժամանակ հաստատուեցին նաև Հայաստանի ու Մարտաստանի սահմանները. և ինչպէս Հայաստանի, նոյնպէս էլ Վրաստանի վաստական կախումը Հռոմից նորից հաստատուեց։ Խաղաղութեան պայմանները յաղթուողների վրայ կալուած ային զրկանքներ չէին դնում, բայց հռոմէացիների համար շահաւետ սահմանադիմ էին որոշում դոքա,

ևոկ պալմիրացոց վերջին ճղնուժամի ըռպէին պարսիների հետ ջինորիս թագուհու գաշնակեցներ էին հանգիսանում. Երկուսն էլ գործերի ընդհանուր դրութեան ընական հետեանքն էր; Որ Աւրելիանոսը չուանուց ոչ Հայաստանը և ոչ Միջագետքը, գրա ապացոյց են մասամբ պատմաբանների լուութիւնը, մասամբ

որ յետոյ երկար ժամանակ զատում էր այս երկու պետութիւնների տիրապետութիւնների սահմանը, որոնք այդ սահմանի համար այդքան երկարատև կոխներ մզեցին։ Այսպիսով Տրայանոսի քաղաքական նպատակները լիապէս իրագործուեցին. բայց հէնց այդ ժամանակ հռոմէական կառավարութեան կայսրութեան կենդրոնը Արևմտաքից Արևելքը տեղափոխուեց<sup>1)</sup>:

Հայոց պատմութեան մասին Մոմէնի արած յիշատակութիւններն այսուեղ վերջանում են, ինչպէս մինչև այժմ աստծներից երեսում է, գերմանացի պատմաբանը չի դրում մեր նախնական կարգուորեալ պատմութիւնը, այդ չոր ու ցամաք յիշատակութիւնները մեզ ծանօթութիւն չեն տալիս հայոց հին կեանքի, նիստ ու կացի, քաղաքական, տնտեսական ու ռազմական կողմերի մասին. այդտեղ ոչինչ չենք դանի ներքին կեանքի մասին, եւ միայն Հայաստանը չէ, որ այդպէս է ներկայանում Մոմէնի «Հռոմէական պատմութեան» մէջ։ Հռոմի նահանգները աւելի կամ պակաս չափով նոյն վիճակն ունին. Սպանիա, Հռենոսեան երկիրները, Աֆրիկա, Ասիական գաւառները համարեա նոյն դիրքով են պատկերանում մեր առաջ անդոյն, կիսադէմ, ազքատ, չոր ու ցամաք եւ այդ զարմանալի չէ կրկնակի պատճառով։

Մոմէնի քառահատոր գորի նպատակն է պատկերացնել հին Հռոմը, գոր նախնական փառքը, զինւորական քաղաքական կեանքը, տնտեսական-ընտանների պայման-

Synesius-ի յիշատակութիւնը, թէ Կարինոս կացորը (աւելի ճիշտ Կարոս) դանուելով Հայաստանում, Պարսկական սահմանների հէնց մատերքում սառնութեամբ է վարուել պարսից գեսպանների հետ և որ պարսից երիտասարդ արքան՝ վախենալով նոցաքերած տեղեկութիւններից, պատրաստակամութիւն է յայտնում Շնարաւոր զիջողութիւնն անելու։ Ես չեմ հասկանում, թէ ինչ պէս Գուտչեմիզը (Ztschr. d. d. M. 3. 50) այս իրողութիւնը Պրոբոսին է վերագրում։ Ընդհակառակն այդ շատ յարմար է գալիս Կարսոսի պարսկական արշաւանքին։

1) V 445—446.

ները, նրա մտաւոր-բարոյական հասկացողութիւնները—մի խօսք նու կամեցել է գրել Հռոմի պատմութիւնը բոլոր կողմերից վերցրած՝ որքան այդ հնարաւոր էր՝ նայած աղքականներին. հասկանալի է, որ այլ աղքութիւններ, որոնք այսպէս թէ այնպէս գործ են ունեցել Հռոմի հետ, յիշատակութեան ողբեք է արժանանան այն չափավ, ինչ չափով որ դոքա շփումն են ունեցել Հռոմէացիների հետ, այս տեսակէտից յոյների մտաւոր-բարոյական կարսղութիւնը բաւական շեշտում է Մոմէն իւր պատմութեան մէջ, պարթեները և ապա Սասանեանք արժանանում են իրանց կրօնի բարքերի և սովորութիւնների ընդառձակ յիշատակութեան.—Ինչու, սրավէնառ այդ երկու աղքութիւններն էլ որոշ չափով մեծ աղքեցութիւն են ունեցել Հռոմէացիների վրայ. յոյները մանաւանդ վճռական նշանակութիւն ունին նոցա նախնական կազմակերպութեան վրայ են: Աւքեմն թէ յոյները և թէ պարսիկները՝ բացի քաղաքական արտաքին յարաքերութիւնից, մտաւոր զօրեղ շփում են ունեցել Հռոմէացոց հետ և փոխադարձապէս զօրեղ կերպով աղքուել իրարից: Իսկ հայերը—նորա միայն քաղաքական յարաքերութեան մէջ էն. Հռոմէացիք բան չունէին սովորելու այդ ասիացի անկիրթ ժաղավորդներից և եթէ մի աննշան մտաւոր շփում էլ կար—հետեանք քաղաքական անընդհատ յարաքերութեան—այդ հայոց կողմից էր: Այնպէս որ հայոց կրօնի, ներքին կեանքի, բարքի ու սովորութիւնների պատկերը չէր պարզի Հռոմէական կեանքի այս կամ՝ այն կողմը, մինչդեռ յունացն օրինակ, անհրաժեշտ էր:

Սակայն կար և մի այլ պատճառ, որ արդելք էր հանդիսանում՝ Մոմէնին—նոյնիսկ եթէ նա կամենար—Հայոց պատմութիւնը հանդամանօրէն գրելու գործում. այդ՝ աղքականների բացակայութեան փասան էր: Մինչդեռ պարսից, եգիպտացոց, հրէից և մանաւանդ յունաց նախնի կրօնական-բարոյական կեանքը դուրս է գալիս նոցա որբազան գրքերում և պատմաբանին առատ նիւթ մատակարարում, իհարկէ ջոկողութեամբ վաւերական պատմութիւն

կազմելու համար. հայոց ներքին կեանքը գրելու, ոչ մի ազրիւր չունէր Մոմէն և չէր էլ կարող ունեցած լինել որովհետեւ չունինք:

Ահա այդ պատճառներով ներկայ աշխատառթիւնս մի կմախք է, կարելի է ասել, որ շատ տեղ նոյն իսկ քաղաքական պատմութեան տեսակէտից ևո պակասաւոր է, Մոմէն ևս, հետեւպէս և նրա ձեռքի տակ եղած աղքաւըները, այդպէս պակասաւոր են ներկայացրելք Յամենայն գեպս այս աշխատութիւնը կարեսը է այն տեսակէտից, որ Մոմէնի պէս լուրջ պատմաբանի երկար տարին ների հետախուզական աշխատանքի եղրակացութիւնն է ամփափում իր մէջ հայոց նախնական քաղաքական պատմութեան նկատմամբ: Եւ ընթերցողը կարող է կատարել լապէս վստահ լինել, որ Մոմէնի գրած հայոց պատմութեան վերաբերեալ ոչ մի տաղ աշքաթող չի արուած այս աշխատառթեան մէջ:

### Յաւելուած

Մոմէն իւր աշխատասիրութեան մէջ մի քանի տեղ ակնարկներ է անում և մի տեղ որոշակի յիշում է, որ «Հայաստանը անխղելի կերպով կապուած էր պարսից պետութեանը՝ հաւատի, լեզուի ընդհանրութեամբ և աղնուական ընտանիքների բազմաթիւ կապերով, զէնքով ու սպառապինութեամբ»<sup>1)</sup>: Պատմագիրն, ինչպէս առուեց, Հայաստանի ներքին դրութեան մասին չի խօսում, ուստի աւելորդ չի լինի պյատեղ մէջ բերել Պարմեական և Սասանեան հարստութեանց ժամանակ Պարսկաստանում իշխող լեզուի ու կրօնի, պետական կազմի և դրութեան կարճառու ստուերազիծը, որ մի կողմանի ճանապարհ է նաև Հայոց մասին մի մտաւոր գաղափար կազմելու համար:

1) Տես ներկայ գրքե եը, 28.

«Միակ մեծ թագաւորութիւնը, որի հետ ընդհարւում էին հռոմէական սահմանները, իրանական տէրութիւնն էր, որի ժողովուրդը, ինչպէս հնումը, նոյնպէս և այժմ ամենից շատ յայտնի է պարսիկ անունով, և որ քաղաքականապէս մի ամբողջութիւն է կազմել Աքեմենիդների և նոցա առաջին արքայ Կիւրոսի ձեռքով, իսկ կրօնի տեսակէտից այդ ժողովուրդը միացած է գէպի Ահրու Մազդան և Միթրոն ունեցած հաւատով։ Զարդացած հին ժողովուրդներից ոչ մէկն այնպէս վաղ և այնքան կատարեալ կերպով չէ լուծել ազգայնութեան միութեան պրոբլէմը, ինչպէս պարսիկները։ Նոցա աշխարհը մի հարթ ու հաւատար, բնական և յարմարաւոր սահմաններով պաշտապանուած երկիր էր։ «Հռոմէացիք պէտք է այժմ գործ ունենային պարթեների միջոցով վերանորոգուած պարօկական պետութեան հետո... Այստեղ յարմար կը ինի հաւաքել այն մի բուռն տեղեկութիւնները, ինչ որ մեզ յայտնիէ պարսից պետութեան ացքի ընկնող առանձնայատկութիւնների մասին։ Աակայն մեզ հասած աւանդութիւնները պատասխան չեն տալիս պատմաբանին անհրաժեշտ հարցերից մեծ մասին։ Իրանց պարթե հարեւանների և թշնամիների ներքին գրութեան մասին արևմտեան հեղինակները միայն պատահական տեղեկութիւններ են տալիս, որոնք իրանց հատուկտորութեան պատճառով հեշտութեամբ կարող են սխալի մէջ ձգել։ Իսկ եթէ արեւելեան գրուները չեն կարողացել ընդհանրապէս իրանց աւանդութիւնների միտքը բացատրել և պահել գալոց սերունդի համար, ապա այդ պակասութիւնը ամենից շատ նկատելի է Արշակունիների ժամանակում, որովհետեւ յետագոյն իրանացիների աշքում թէ Արշակունեաց և թէ նոցա նախընթաց Եելիկեանց իշխանութիւնը համարուել է յափշտակութեան շրջան» (Usurpation).

«Պետական կազմակերպութիւնն էապէս նոյնն էր, ինչ որ Աքեմենիդների ժամանակ, Հարստութեան հիմնադրի ցեղը շրջապատուած էր նոյն շքեզութեամբ և մեծարանքով, որ յարմար էր ժառանգական և Աստծուց

կարգուած իշխանութեանը։ Նրա անունն օրէնքով անցանում էր յաջորդներից իւրաքանչիւրին և նրան աստուածային պատիւ էր արւում, որա համար նորա յաջորդները կոչւում են նաև Աստծուծոյ որդիք և բացի գրանից եղայր արեւ-աստծու և գիցուհի լուսնին, ինչպէս մինչեւ այժմ կոչւում են պարսկական շահները։ Արքապղծութիւնն էր համարւում աշքայական տան անդամներից որիէ մէկից նոյն իսկ անակընկալ կերպով մի կաթիլ արիւն թափելլ։ Այս բոլորը քիչ սահմանափակումներով հանդիպում ենք և հռոմէական կեսուարների կեանքում, և կարելի է գոքանցած են նոցա աւելի հին և զօրեղ արքաներից։

«Թէև արքայական աստիճանը սերտ կ'ըպա՛վ կապաւած էր արքայական ցեղին, ստկայն և այնպէս գոյութիւն ունէր աշքայալնարութեան նման մի բան։ Որովհետեւ նոր իշխողը պէտք է պատկանէր ինչպէս «Ա՛քայական տան ազդակիցների» խմբին, նոյնպէս և քուրմերի գասին, որպէս զի կարողանար գահ բարձրանալ, ուստի պէտք է գոյութիւն ունեցած լինէր մի որոշ գործողութիւն, որով հաւանօրէն այդ խմբերը ճանաչում էին նոր իշխողին։ Ազդակիցներ ասելով չպիտի հասկանալ իհարկէ միայն Արշակունիներին, այլ և այն «7 տներին»—իշխանական ցեղերին, որոնք Աքեմենիդների ժամանակ հաւասարասերունդ էին արքաներին և ազատ մուտք ունէին արքայից արքաների մօտ և որոնք նոյն այդ արտօնութիւնները պահում էին այժմ։ Արշակունիների ժամանակ, Այդ ցեղերին էին պատկանում նաև պալատական ժամանգական պաշտօնները։ Այդպէս օրինակ Սուրէնները, որոնց անուններն, ինչպէս Արշակունիները, միաժամանակ թէ յատուկ անուն էր և թէ պաշտօնի անուն, արքայական տնից յետոյ Երկրորդ ցեղն էին կազմում և որպէս թագադիր իշխաններ՝ իւրաքանչիւր անգամ նոր Աշխակունու գլխին խոյր էին գնում։ Սուրէնները Սագաստանցի սկիւթներից էին հաւանօրէն։ Նշանաւոր տեղ էին գրաւում նոյնպէս և գոթերը՝ արեւելեան Մարտասանից։

«Երկրի կառավարութիւնը գտնուում էր ստորագրեալ

թագաւորների կամ՝ սատրապների ձեռքում, Վեհապահանի ժամանակաւայ հառնէացի աշխարհագիրները ենթադրում էին, որ պարթևական պետութիւնը բաղկացած է 18 թագաւորութիւններից։ Այդ սատրապութիւններից մի քանիսը պատկանում էր արքայական տան կողմնակի ճիւղերին—այդպէս օրինակ ճիւղիս արևմտեան 2 նահանգները Ատրապատենական Մարտաստանը (Ատրապատական) և Հայստանը (ինչ չափով որ դա պարթևական իշխանութեան տակ էր) այն գահի իշխանին էին յանձնում, որը արքայական տան մէջ բարձրագոյն իշխողից յետոյ աւագն էր։ Ապա միւս սատրապութիւններից նշանաւոր էին Էլիմայակամ՝ հօշ (Susa) կոչուած երկիրը, որի սատրապը յատոկ իշխանութիւն ունէր և առանձին դիրք։ Պարթևական պետութեան մէջ աւատական թագաւորութիւնները կառավարութեան եթէ ոչ բացառապէս՝ զոնէ գերակշռող և տիտղոսով պայմանագրուած ձեւեր էին, այնպէս որ սատրապներն իրանց իշխանութիւնն ստանձնում էին ժառանգարար, սակայն պէտք է հաստատուէին ծայրագոյն իշխանութեան կողմից։ Այդ կարգերն ըստ ամենայն հաւանականութեան կոմիտամ էին աւելի ստորին շոշաններում, այնպէս որ ցեղերի աւելի փոքր իշխանները և կառավարիչները նոյն յարաբերութեան մէջ էին սատրապների նկատմամբ էին։ Այդպիսով պարթևների մէջ ծայրագոյն արքայի իշխանութիւնը շատ սահանափակուած էր յօդուտ ժառանգական ազնուականութեան, որի հետ նա պիտի բաժանէր իւր կառավարելու իրաւունքը։ Այստեղ շատ յարմար է գալիս այն փաստը, որ ազդարնակութեան մեծագոյն մասը մասսամբ կամ բոլորումին անաղատ մարդկանցից էին բաղկանում և նոյն ազատ թուղնել չէր թոյշլարուում։ Պարթևները մշտական զօռք երթք չեն ունեցել, այլ պատերազմի ժամանակ միշտ զուգազ էին հանում (աշխարհազօր), որ տալիս էին աւատական իշխանները և սոցա ստրագրեալ աւատական կալուածաւերերը և որ բազկանում էր այդ վերջիններին ստորա-

դրուած անազատ մարդկանց ահագին բազմութիւնից։ Պարթևաց պետութեան մէջ մեծամեծ քաղաքներն անդամ աւանների պէս էին։ գոքա չունէին ոչ սեփական քաղաքացիութիւնը կառավարութիւնը գտնուում էր աշխայական պաշտօննեանների ձեւորին։ Թէև Պարսկաստանում կային յունական մի քանի օրինակելի քաղաքներ, բայց գոքա բացառութիւն էին և չեն խանգարում ընդհանուր պատկերը։ «Իրանի կրօնը, իւր միաստուածութեան մօտեցող պաշտամունքով» աստուածներից ամենաբարձրեալի, որ ստեղծել է երկինքն ու երկիրը և մարդկանց և ամենայն օգտակար բան իւր անպատկերաւորութեամբ ու հոգեռութեամբ, իւր խիստ բարոյականութեամբ ու ուզդութեամբ, գործնական կեանքն ու եռանդուն կենցազավարութիւնը քաջալերելով իւր հետեւզների հոգիններն այնպէս խօր է թափանցել, ինչպէս ոչ մի կրօն Արևմուտքում իրանում ազգային կրօնը կապուած էր ազգային պետական կազմին աւելի սերտ քան կելտերի մէջ։ Օրինական արքայական աստիճանը իրանում միաժամանակ նաև կրօնական հաստատութիւն էր և երկրի ծայրագոյն իշխանը թագաւորելու կոչուած էր համարւում բարձրագոյն աստուածութեան կամքով։ Նա ինքը որոշ չափով աստուածների կարգին էր գաւում։ Փողերի վրայ միշտ պատկերացնում էին կրակապաշտների մի մեծ սեղան, որի վրայ թևապարում էր թեւառու Ահրամազդա աստուածը։ Դրա կողքին խնդրովական գիրքով կանգնած էր աշխատ յարմարեական և արտօննեալ գիրք ունեին իրանի մէջ ազնեւական և հոգեռոր գաւերը, Այդ կրօնի քրմերի, մողերի մասին յիշւում են Աքեմենիդների գեռ հին գրեիրում և Հերուգոտի պատմուածքներում և գոքա հաւանօրէն առանց հիմքի չեն համարուել պարսից ազգային հաստատութիւն։ Քըմութիւնը ժառանգական էր, իսկ բոլոր քրմերը միասին կազմում էին եթէ ոչ ամեն տեղ, գոնէ Մարտաստանում մի առանձին գասւ... Ահրու-

մաղդայի քրմերը արքայի խորհրդականներն էին համարւում և նա սոցանից էր հարցնում կարեոր հասարակական գործերի մասին... իրանի կրօնը իւր գլխաւոր գծերով միշտ անփոփոխ է մնացել:

«Պարթեաց պետութեան մէջ տեղական լեզուն էր իշխողը՝ Ոչ մի նշան չկայ, որ Արշակունեանց ժամանակ պարթեաց երկրում որևէ այլ լեզու տիրող եղած լինէր» Դա չի կարելի ասել նոյնպէս յունաց լեզուի համար, որով դրաշմուած կան շատ դրամներ, որովհետեւ դոքա ոչ թէ պարթեների կտրած փողերն են, այլ յունական քաղաքների, որոնք գտնուում էին պարթեաց երկրում և իրաւունք ունեին մայրենի լեզուվ փող ունենալ:

Սառանեանց օրով Պարսկաստանի կազմն ու ներքին դրութիւնը չի փոխուում ընդհանուր առմամբ։ Սառանեանց տիտղոսն էր «Մառայ Մաղդայի», Աստուած այսինչ (թագաւորի անուն) Արեաց (Աստաշիրից յետոյ նաև Անարեաց) արքայից արքայ, աստուածային ծագումով այդպէս էր համարեա նաև Արշակունեանց տիտղոսը։

«Իրօնական տեսակէտից ևս մի էական փոփոխութիւն առաջ չի եկել, բայց կրօնն ու հոգեհորականութիւնը պարսից ծայրագոյն արքաների իշխանութեան տակ այնպիսի ազգեցութիւն և զօրութիւն ձեռք բերին, ինչպիսին երբէք չեն ունեցել նորա պարթեածագուների ժամանակ։ Ոչնչ անհաւանական բան չկայ, որ Մաղդայի կրօնը՝ կոռւելով մի կողմից արեւելեան բուդպայտականութեան, իսկ միւս կողմից արևմտեան երկարիստանէութեան հետ, հետագիտէ փոխուեցաւ։ Նոր հարստութեան հիմնադիր Արշակները, ինչպէս պատմում են և ինչպէս հաւանական է, եռանդուն կրակապաշտ էր և ինքը քրմական աստիճան ունէր, գրա համար, ինչպէս շարունակում են պատմել, այն ժամանակուանից մոդերի դասը դարձաւ ազգեցիկ և հաղարտ, մինչդեռ դա մինչև այդ ժամանակ ոչ մի պատիւ վայելում և ոչ էլ այդ ազատութիւնն ունէր, իսկ իշխողների աջում նոյն իսկ նշանակութիւն էլ չունէր։ «Այն խողների աջում նոյն իսկ նշանակութիւն էլ չունէր։ «Այն ժամանակուանից պարսիկներն սկսեցին յարգել բոլոր

«Բարթերին և խոնարհուել նոցա առաջ, դոցա խորհութեալն ու նախագուշակութիւնները հասարակական գործերի մէջ զեկավարող տեղ գրաւեցին, ամենայն գաշնաւորութիւն, իրաւունքների մասին եղած խրաբանչիւր մի վիճ նոցա հայեցողութեան և վճռին էր պատկանում և պարսիկների համար ոչ մի բան արգար և օրինաւոր չէր, ապարակիների համար ոչ մի բան արգար և օրինաւոր չէր, ապարակիների կողմից Համաձանչ ար հաստատուած չէր որևէ քրմի կողմից։ Համաձանչ ար հաստատուած չէր որևէ քրմի կողմից ապարակիների կառավարութեան այնպիսի կազմակերպութիւն, որ յիշեցնում է կայսրների և իշխանների պատկերի և եպիսկոպոսների գրաւեցիւնը իրաքանչիւր մի շրջան ենթարկուած է մի տապ մոգի (Magupat, Magierherr, նոր պարսկերէնում Մովրետ-Мобеди). իսկ այս բոլոր մոգերը ենթարկուած են ծայրագոյն տապ մոգին (Մովրետան Մովրետին-Мобедан-Мобедի). արքայից արքաների օրինակով, որից և նա գերազանցում է։ Շուտով և երեսն եկան քրմական այդպիսի իշխանութեան հետքերը, անփոփոխ ծիսարանը, մեղքի և քաւութեան համար նզած ճնշիչ հրամանները, դատարկ պատգամախօսութիւններով սահմանափակուած ու կախարդական արքունութիւններով բաւականացող նոցա գիտութիւնը այդ բոլորը միշտ եղել է զրադաշտական կրօնի մէջ, բայց գոքա ամենից շատ այս շրջանում հասան իրանց կատարեալ զարգացմանը<sup>1)</sup>։

Վ Ե Ր Զ

1) Պարթեները և Սառանեանների մասին տես Վ Հատոր 339—350 և 411—416։